



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՄԵՍԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՄԱՅԻՆ

ԹԻՒ 5

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառերն են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կիրպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեան խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգին չձարգմանէր, չյուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեկածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ



Ա Ն Ա Հ Ի Տ



ԵՕԹԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃՍՐԵԼ

ԱՆԱՀԻՏԸ աւարտեց իր վեցերորդ շրջանը եւ կը մտնէ եօթերորդը :

ԱՆԱՀԻՏԻ գլխաւոր նպատակն եղած է միշտ՝ նպաստել, իր ուժերուն ու միջոցներուն չափովը, հայ ժողովրդին բարոյական ու մտաւորական զարգացմանը : Պիտի շարունակէ այսուհետեւ, առաւել քան երբեք եռանդով, իր ջանքերը նուիրել այդ էական նպատակին :

Պիտի հրատարակէ 1. Խնամուած ու մանրակրկիտ ուսումնասիրութիւններ ազգային, գրական, գեղարուեստական, պատմական, իմաստասէրական, գիտական, ընկերական հարցերու վրայ . 2. Քննական ու կենսագրական յօդուածներ եւրոպական գրականութեան ու արուեստի մեծ դէմքերու եւ յատկանշական շարժումներու մասին, եւ թարգմանութիւններ արեւմտեան գրականութեան հատընտիր էջերու : 3. Ուսումնասիրութիւններ արեւելեան գրականութեանց մասին, եւ թարգմանութիւններ արեւելեան գրականութեան գեղեցիկ հատուածներու . 4. Բանաստեղծութիւններ, վիպակներ, հին ու նոր կեանքի պատկերներ, քննական քրոնիկներ ժամանակակից հայ գրական ու գեղարուեստական բնորոշ երեւոյթներու մասին եւն. եւն. :

ԱՆԱՀԻՏԻ խմբագրութիւնն այս առթիւ իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այն բոլոր աշխատակիցներուն որոնք հաճեցան սգնուարար աջակցել եւ այսուհետեւ ալ պիտի աջակցին իր ջանքերուն եւ որոնց թիւն այժմ կը ստուարանայ քանի մը նոր ու կարեւոր աշխատակիցներով : Մեր ծրագրին համակրող եւ մեր ստանձնած գործին կարեւորութիւնն զգացող ուրիշ լուրջ մտքեր ալ՝ եթէ իրենց աջակցութիւնն ուզեն բերել կցել մեր ջանքերուն, վստահ կրնան ըլլալ որ ԱՆԱՀԻՏԻ մէջ պիտի գտնեն եղբայրական հիւրընկալութիւն : ԱՆԱՀԻՏԸ ազանգամով, անձկամիտ ու սահմանափակ հրատարակութիւն մը չէ . խմբագրութիւնն ունի իր որոշ համուզումները, ձգտումները եւ ուղղութիւնը՝ ամէն տեսակ հարցերու մէջ, բայց եւ սիրով կը հիւճրընկալէ տարբեր ձգտումներէ ներշնչուած յօդուածներ, պայմանով որ լրջութեամբ եւ անկեծութեամբ յղացուած ըլլան եւ գրական վայելուչ ձեւով արտայայտուած : Եւ անձնիւր աշխատակից միմիայն իր յօդուածին պատասխանատուութիւնն ունի :

Կը խնդրենք մեր բաժանորդներէն որ միանգամ ընդ միշտ ըմբօղանն թէ ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ Է ԿԱՆԽԻԿ ՎՃՍՐԵԼ : — Կը խնդրենք մեր գործակալներէն որ իրենց ջանքերուն մէջ ՓՈՒԹԿՈՅ ԸԼԼԱՆ որքան կարելի է :

Մեր ընթերցողներէն կամ բաժանորդներէն անոնք որ հինգ բաժանորդ գտնեն եւ բանագրիները կանխիկ գանձելով մեզի հասցնեն, պիտի ստանան ձրիաբար Անահիտի 1905ի բոլոր թիւերը. անոնք որ տասը բաժանորդ գտնեն, պիտի ստանան ձրիաբար 1905ի եւ 1906ի Անահիտը գլ « Պէշիկթաշկեանի ձառերն ու քերթուածները » :

ԱՆԱԿԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Է. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ

Թիւ 5

Կոստանդին Երզնկացի



հա անուն մըն ալ, որ բացարձակապէս անձանօթ է մնացած մեր գրական հասարակութեան (գրողէսններն ալ մէկտեղ հաշուելով), և որ սակայն պէտք էր շատոնց քա-

ջայայտի դարձած ըլլար մեզի՝ իբրև մեր հին աշուղական բանաստեղծութեան ամենէն թանկագին անուններէն մին: 1866ին, «Բաղմալէպ»ը անդամ մը յիշատակած է այդ անունը, Հայոց հին ժողովրդական բանաստեղծներու վրայ փորձիկ տեսութեան մը մէջ. խօսելէ յետոյ Յովհանն Երզնկացուոյն և Յաչատուր Կեչառեցուոյն վրայ, յօդուածագիրը կ'աւելցնէ. «Ստոնջ ժամանակակից է Կոստանդին Երզնկացին, որ միայն իր երգերով ծանօթ է մեզի, կամ թէ լա-

է ըսել՝ մեզ հասած մէկ ձեռագրով մը, որ գրուած է յամին 1336, «Ի Դավրէժ, Ի Դաւազալայի Մնջայոանս», ձեռագր Ամիր Փօլին, որ է որդի Գալայմաչի Յուսեփայ, և թուն Միթոռի, ժամանակակից և բարեկամ հեղինակին, որ և ասոր (Ամիրի) համար գրեր է իր քերթուածները, և ինչպէս կ'երևի հետզհետէ կը խաւրէ եղեր անոր: Ան ալ յետոյ ամենը մէկ ժողվեր է: Թուով ՁՁ են այս ստանաւորները:» Յետագայ թիւերու մէջ «Բաղմալէպ»ը հրատարակած է չորսը այդ քերթուածներէն:

Այդ հրատարակութիւնը անցած է աննշմարելի, առանց ո և է հետք ձգելու (և ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ քանի որ այդ հրատարակութեան չէ ընկերացած ո և է քննադատական ուսումնասիրութիւն՝ այդ բանաստեղծութեանց արժէքը բացաւորով, վերլուծող, գնահատող): Մեր բոլոր գրական հաւաքածոներուն մէջ — որոնք արդէն ա'յնքան տեսակէսներով պակասաւոր են —, ինչպէս և աշուղական մեր հին գրականութեան մասին նուիրուած ուսումնասիրութեանց մէջ, Կոստանդին Երզնկացիի անունը չէ յիշուած երբեք իբրև կարեւոր անուն մը: Այդ չորս կտորները, զոր կը վերատպենք այսօր Անանիսի մէջ, պիտի կարդացուին ինչպէս անտիպ էջեր:

Եւ սակայն, ներշնչման փափկութիւնով, խորութիւնով, անկեղծութիւնով, ձեւի նըրբութիւնով ու ինքնատուութիւնով, այդ բանաստեղծութիւններն՝ ըստ իս՝ մեր հին աշուղական

բանաստեղծութեան ամենէն գեղեցիկ էջերէն են: Իրենց արժէքը անտարակուսելի կերպով աւելի մեծ է քան Գրիգոր Աղթամարցիի, Յովհաննէս Թլկուբանցիի եւ Մկրտիչ Նաղաշի քերթուածները, որոնք ծանօթ են՝ շնորհիւ Պ. Կոստանեանցի հմտալից ու խնամոտ հրատարակութեանց:

Կոստանդին Երզնկացի միստիքական մըն է. սիրոյ լարը, զոր Քուչակ աստուածայնօրէն հնչեցուց, մտածման ըմբոստացումները որ պահ մը կայծկլտացին « Ֆրիկ »ի « Դանգատ »ին մէջ, անծանօթ են իրեն. բայց իր միստիքականութիւնը աստուածաբանական իմաստակութեամբ, վարդապետական ճոռոմութեամբ խաթարուած չէ. քրիստոնէական աշխարհայեցողութեան քանի մը էական մոթիֆներն են, — աշխարհային մեծութեանց ունայնութեան զգացումը, հոգեկան կեանքի ու հոգիներու աղբււր Աստուածութեան պաշտում մը բողոքանուէր, — որ գլխաւոր նիւթը կը կազմեն այդ քերթուածներուն, բայց այդ մոթիֆները՝ իսկականապէս բանաստեղծ հոգիի մը մէջէն անցնելով՝ ստացած են այն նուրբ ու կենսունակ սարսուռը որ զանոնք գեղեցիկ ու յուզիչ կը կացուցանէ: Ռեէ գեղասէր ընթերցողի համար՝ հաւատացեալ կամ ոչ: Նոյն իսկ « Բանք յաղագս արեգականն արգարութեան » քերթուածին մէջ, ուր աստուածաբանութեան տարր մը կայ՝ Երրորդութեան ակնարկող պատկերներով, կը տիրապետէ սքըտաբուխ ու լուսաւոր քնարերգութիւն մը որ իր մէջ կը հալեցնէ եւ « կը բանաստեղծականացնէ » ինչ որ քերթողին մէջ գտնուած աստուածաբանը հոն դրած է իրմէ: Քնքուչ ու խորունկ բուրումը որ կը բարձրանայ այդ քերթուածներէն, եկեղեցիի փակ մթնոլորտին խունկ ու մոմին հոտը չէ, ոչ ալ ձգնախուցին հիւանդոտ ու գալարատանջ արտաշնչութիւնը. Աստուածութեան սիրովը գինովցած, տիեզերական տեսանելի գեղեցկութեան մէջ դէպ ի անտեսանելի եւ յաւիտենական գեղեցկութեանց աղբերակը ձգտող խանդոտ հոգիի մը օրհներգն է՝ բաց օդի մէջ, ինքնաբուխ ու, անկեղծ ժեսթով մշուղակի արձակուած: Ատիկա կը յիշեցնէ այն հոգեկան վիճակը որուն մէջ իրենց հրաշակերանները գրեցին իտալական Վերածնութեան մեծ ռահվիրաները՝ Փէթրարքա եւ Տանթէ:

Իրենց խորապէս քրիստոնեայ — եւ աստուածաբան — միտքը, թափանցուած ըլլալով հանդերձ միջնադարեան միստիքականութեան երկրատեսաց ու երկնաբաղձիկ ձգտումներովը, հելլենօ-լատին գեղեցկագիտութեան կենսախայտ ու երկնավառ հմայքը կրած էր միանգամայն, եւ իրենց գործերուն մէջ այդ կրկին ու ներհակ ազդեցութիւնները՝ հզօր անկեղծութեան մը մէջ իրարու շաղապատուած՝ անոնց կուտան ա՛յնքան խոր ու վրդովիչ հրապոյր մը. այդ մասնաւոր հրապոյրն է — տխուր իմաստասիրութիւն մը՝ պայծառ ու գրեթէ զուարթ քնարերգութեամբ մը արտայայտուած, անդրաշխարհիկ տեսիլքներու փառաբանում մը՝ ամենէն երկրաւոր պատկերներով թարգմանուած, — զոր կը գտնենք, անշուշտ անհունապէս խոնարհ չափով մը, մեր Կոստանդին Երզնկացուոյն մէջ:

Այդ հանգիտութիւնը շատ շահեկան է, մասնաւոր որ քնն չի բացատրուիր փոխադարձ ներգործութեամբ: Ենթադրել իսկ կարելի չէ որ Երզնկացին ճանչցած ըլլայ Փէթրարքայի եւ Տանթէի գործը: Իր կեանքին ու մտաւոր դաստիարակութեան մասին արդէն ոչինչ գիտենք. « Բանք արակութեան մասին արդէն ոչինչ գիտենք. « Բանք յաղագս անցաւոր մեծութեան » քերթուածին վերեւ գտնուող ծանօթութիւնէն կարելի է հետեւեցնել թէ պարսկերէն լեզուի եւ գրականութեան տեղեակ էր. բայց մեր բանաստեղծը Ֆիրտուսի կամ ուրիշ ո եւ է պարսիկ քերթողի մտաւորական ու գեղեցկագիտական ազդեցութիւնը կրած ըլլալ չի թուիր: Խորապէս քրիստոնէական է այդ բանաստեղծութիւնը, եւ յունական նրբութիւն մը, արեւմտեան փափկաճաշակութիւն մը կը շնչտուրի հոն — արեւելեան ճոխութեան հետ: Հանգիտութիւնը ինքնաբեր է, թերեւս արդիւնք յունական տարրերու, որոնք մինչեւ Երզնկացի կրնան հասած ըլլալ եւ որոնք՝ գիտենք՝ ո՛րքան մեծ տեղ կը բռնէին իտալական Վերածնութեան վարպետներուն մտքի կազմութեան մէջ. թերեւս ալ ատիքնական, ճաշատագրական « երկուոյթ » մըն էր որ միեւնոյն ատեն տեղի կ'ունենար, միեւնոյն շարժառիթներուն հետեւանքով, աշխարհիս գանազան կէտերուն մէջ. տեսակ մը մտաւոր ու հոգեկան գարուն, որ Միջին-Դարու երկայն ձմեռէն յետոյ կուգար մարդկային միտքը արեւու ու ծաղիկներով լուսավառել, նախ՝ ձմեռուով:

ուան վերջին ձեռնբերուն իսկ խառնելով իր կենսաժալիտ բոցերը, յետոյ՝ հետզհետէ՝ ամբողջապէս վանելով ձմեռը եւ իր երիտասարդութիւնը անխառնօրէն տիրական դարձնելով. ԺԻ. դարուն է որ Իտալիոյ, ինչպէս եւ Ֆրանսայի մէջ՝ սքողաստիքական, վանական գրականութեան մէջէն կը յաղթականօրէն կեանքի ու գեղեցկութեան զգացմամբ տրոփող հրաշալի բանաստեղծութիւն մը որ Փրովանսի մէջ ԺԲ. դարէն իսկ արդէն սկսած է իր առոյգ վրթութեամբ. նոյն միջոցին է որ մեր մէջ կը ծնի աշուղական բանաստեղծութիւնը. դրարարին եւ հին զուտ-կրօնական գրականութեան մահն է որ կը սկսի այդ պահուն, եւ աշխարհաբարի կանգնումն իբր գրական լեզու. աշխարհիկ զգացումները, ազատ ներշնչումները կ'երեւան բանաստեղծութեան մէջ, կը թափանցեն նոյն իսկ եկեղեցական քերթողներէ ոմանց (Գր. Աղթամարցի, Յ. Թուրկուրանցի, Սարկաւազ Բերդակեցի, Ֆրիկ՝ մասամբ, եւն.) գրութեանց մէջ, յետոյ՝ գրեթէ անխառն կը տիրափայլին Քուչակին եւ իր յաջորդներու սիրերգներուն մէջ :

Կոստանդին Երզնկացիի քերթուածներէն միայն « Գարուն »ն է որ գրեթէ զուտ-աշխարհիկ է ներշնչմամբ. բանաստեղծը կ'երգէ՝ զմայլմամբ ու երախտագիտութեամբ՝ ընտրութիւնը վերակենդանացնող, աշխարհը երիտասարդացնող, մարդուն սիրած լուսաւորող եղանակին գովքը. անշուշտ՝ իր գովքը կը սկսի Գարունը մարդկութեան պարգեւող Արարչին փառաբանութեամբ, բայց կտորին մէջ տիրապետողը Գարունին առողջ, զուարթ, կենսաբեր, սիրահրաւէր գեղեցկութեան հանդէպ հոգիին ու մարմնոյն բնազգական, գրեթէ բնախօսական հրճուանքն է. կտորը սքանչելի է արդէն, — հակառակ քանի մը արեւելեան կրկնաբանութիւններու — թերեւս ամենէն թարմ ու ինքնատիպ երգը գարունի, զոր ունինք հայերէն լեզուով, արժանի ֆրանսական վերածնութեան գողար բանաստեղծներուն, Ռոնսարներուն, Ռեմի Պելլօներուն, Պաիֆներուն. վերջին տունին պատկերը — սոխակը «չաքարբերան» որ կուգայ կանանչ վրան մը կանգնել որպէս զի վարդը հոն բազմի իբրեւ վառած կրակ մը», — ամենէն հոյակապներէն է զոր քերթողական երեւակա-

յութիւնը գտած ըլլայ :

Վյստեղ կը դնեմ, բաղդատութեան համար, հայերէն թարգմանութիւնը ճիշդ նոյն նիւթին վրայ Ռեմի Պելլօի (ԺՁ. դար) համբաւաւոր սաղին, զոր Ֆրանսացիք իրենց բոլոր հատընտիր հաւաքածուններուն մէջ կը յիշեն իբր իրենց գրականութեան գոհարներէն մին. շատ նուրբ կտոր մըն է իրօք, թարմ ու քնքուշ գոյներով, ոտտոստուն ու թեթեւ, գայլայլող տաղաչափութեամբ մը. բայց մեր Երզնկացիին «Գարուն»ը, եթէ ձեւի վերջնական կատարելութեան տեսակէտով վար կը մնայ Պելլօի երգէն, կը գերազանցէ զայն՝ հրճուանքի աւելի յորդ ու լայն զօրութեամբ մը, պատկերներու հարբատութեամբ եւ այլազանութեամբ, եւ հոգեկան խորունկ շունչով մը որ Պելլօին մէջ կը պակսի .

Ապրի՛լ, պարծա՛նք անտառներուն
 Ի ամիսներուն,
 Ապրի՛լ, քա՛ղցր յոյս պրտուղներուն
 Որ բամպակին տակ կոկոնին
 Կը սնուցանին
 Մատաղածիլ մանկութիւննին ,

Ապրի՛լ, պարծա՛նք թարմ ու կանանչ
 Մարգերուն,
 Դուն որ հոյզով մը բազմերանգ
 Կը կիտուածես բիւր գոյնըգգոյն
 Ծաղկներով
 Անոնց հանդերձը խայտաբղէտ .

Դուն ես, վեհանձն ու սիրուն,
 Որ աքսորէ
 Այդ անցորդները կ'ազատես,
 Այդ ծիծառներն որ կը թռչին
 Եւ որ գարնան
 Գալուստը մեզ կ'աւատեն :

Մասրածաղիկն ու սիրափուշն
 Ու ծոթրին,
 Մեխակ, շուշան, ու վարդ, առատ,
 Այս գեղեցիկ եղանակին,
 Յոյց կուտան
 Պատմութեաննին նորափրթիթ :

Ահա սոխակը սիրուն,
 Անուշիկ,

Կ'որէ շուքին տակ ծառերուն
 Հազար շաղիաղի ձայնախաղեր
 Թըրթըռուն,
 Շուրջը քաղցրիկ իր երգին :

Երգնկացի միւս քերթուածներէն երկուքին մէջ (« Սէր եւ Առաւօտ », « Բանք յաղագս արեգականն արդարութեան »), կրօնական ոգին է տիրապետողը, բայց կրօնական ոգին հոտ բանաստեղծական այնքան լայն ներշնչուով մը արտայայտուած է, որ քանի մը բառ, քանի մը պատկեր փոխելով՝ այդ երգը պիտի համապատասխանէր բնութեան միծկայելչութենէն գինովցած եւ զայն յօրինող սկզբնական ուժին վրայ սքանչացմամբ խոկացող ո եւ է ազատ մտքի յուզմունքին. Աստուծոյ հասարակ, վարդապետական գովքը չէ, ծթոած ու արուեստական պատճառաբանութիւններով, Ս. Հայրերէ իմաստակ յիշատակութիւններով, անիմաստ, բանազբօսիկ ու չոր դարձուածաբանութիւններով ծանրաբեռնուած . սիրով, երախտագիտութեամբ, հիացմունքով յորդող սրտին բուռն ու պարզ ժայթքումն է դէպ ի մեծ Արուեստագէտը տիեզերքին, դէպ ի դերագոյն Սիրտը սիրոյ եւ գեղեցկութեան . ախի օրհներգն է, ոչ այնպէս ինչպէս աստուածաբանութեան « արհեստականները » աքնաբանած են, այլ ինչպէս զայն յղացած ու երգած են յափշտակուած « բանաստեղծները », Վետաներու քերթողներէն մինչեւ Տանթէ, Սիլտոն ու Լամարթին . ի՛նչ հրաշալի խորութեամբ ու քնքշութեամբ արտայայտուած է ազօթրանի պահուն հրեշտակային քաղցրութիւնը՝ « Սէր եւ Առաւօտ » քերթուածին մէջ .

Թե՛ Տերն ի յարաբաժս հայի քաղցր ի յի՛ սիրուն,
 Յայն պահուն է որ լինի նեան լուսոյն առաւօտուն . . .

Ամբողջ քերթուածը ողողուած է կարծես առաւօտեան վարդաճաճանչ պայծառութեանց գերամաքուր շողիւնովը, բնութեան ու հոգեոյն զարթումին նիւթական ու իմանալի երգերովիլ ու բոյրերովիլ անսահման: Լոյսի եւ հրճուանքի միւսնոյն տօնը կը ցնծայ « Բանք յաղագս արեգականն արդարութեան » քերթուածին մէջ :

Եկեղեցական բանաստեղծութեան մէջ հասարակ-տեղիք մըն է Քրիստոսը Արդարութեան արեգակի նմանցնելը . բայց հոս այդ նմանութիւնը ի՛նչպէս կենդանի է դարձած, ի՛նչպէս կը թըրթոայ, կը վառի, կ'երգէ . բանաստեղծը զգացած է՝ գրեթէ ֆիզիքական հեշտականութեամբ մը՝ Քրիստոսի ծագիլը մարդկութեան վերսկնչպէս իրական արեւու ելք մը դիտող աւելնոտ հոգի մը կը զգայ այդ կենսաբեր, զուարթարար ծագումին գեղագիտական վեհութիւնն ու հոգեպարար քաղցրութիւնը : Մէկը միայն այդ քերթուածներէն, — « Բանք յաղագս անցաւոր մեծութեան » — տրտում նօթ մը կը հնչեցնէ, ճգնարանի նօթ մը . աշխարհային հաճոյքներու, մեծութեանց, հրապոյրներու վաղանդկութեան ծանօթ ու աշխարհիս չափ հին յանկերգն է որ հոտ անգամ մը եւս կը հնչէ եւ որ բոլոր եկեղեցական գրագէտներուն լայթմոթիֆը կազմած է . բայց սխալ պիտի ըլլար կարծել թէ առի զուտ-եկեղեցական յանկերգ մըն է. Աստուածաշունչին « Թողովողն » սկըսեալ — որ շատ տարտամ հաւատացեալ մըն է, անցնելով Պոսիւէէն որ բացարձակ հաւատացեալն է, մինչեւ Լէոփարոփ եւ Լըքոնթ աը Լիլ, որ բացարձակ անհաւատներ էին, այդ յանկերգը հնչած է, տարբեր շեշտով, խորքին մէջ միշտ նո՛յն, ու միշտ, աւա՛ղ, ճշմարիտ ու վրդովիչ . ու որքան տեւէ մեր երկրագունտը, այդ յանկերգը պիտի հնչէ միշտ, յաւիտեանական մահազանգի մը պէս : Ինչ որ կարեւոր է՝ նորէն՝ նկատելու, այն է որ հող ալ, Երգնկացին ինքնատիպ կը յայանուի եւ խորագրաց. յանկերգը՝ իր քնարին վրայ՝ առած է նոր շեշտ մը, որ իրն է՝ Ծանօթ են Ֆրանսուա Վիլիսնի (Փե. դար, Երգնկացիէն հարիւր տարի յետոյ) զմայլելի պալլատները ուր կ'ողբայ բոլոր անհետացած գեղուհիները եւ փոշիացած քաջերը .

Ըսէք, ուր է, ո՞ր երկրին մէջ,
 Ֆլորան, աղւոր Հոովմէուիին,
 Արքեպեադան, եւ Թայիսը,
 Որ ազգականն էր էնոր .
 Եւ էքօն, որ կը խօսէր եք գետակներու
 Կամ լիճերու վրայ աղմուկ հանէին
 Եւ որ ունէր գերմարդկային գեղեցկութիւն .
 Բայց ո՞ւր են, ո՞ւր, ձիւներն հերուան . . .

... Այս աշխարհս է լոկ պատրանք,
 Մահուան դէմ մա՛րդ չի դիմանար,
 Մա՛րդ ճար չունի անոր դէմ.
 Հարցում մըն ալ թողէք ընեմ.
 Լանսլօ, արքան Պէհէնեի,
 Ո՛ւր է, եւ ո՛ւր է պապն անոր.
 Իայց ո՛ւր է քաջ Շարլըմա՛ներ . . . :

Կեանքի վաղանցկութեան ազգած տրտմու-
 թիւնը, մահուան անխուսափելի ուրուակա-
 նին ներշնչած սարսափը՝ Վիյեոն ուրիշ էջերու
 մէջ ալ, յաճախ, երգած է, ու մանաւանդ
 « Մեծ Կտակ »ին՝ այն հռչակաւոր հատուածին
 մէջ ուր ցոյց կուտայ՝ ահաւոր իրապաշտու-
 թեամբ տողելով՝ մարդկային կեանքի ողորմելի
 քուրջը մահուան ճանկին մէջ ճմրթկուած .

« . . . Գիտեմ որ չեմ ես որդի
 Գլխուն վըրայ աստղազարդ
 Թագ մը կըրող հրեշտակի .
 Հայրս մեռաւ, հոգւոյն Աստուած՝ ողորմի.
 Մարմինն հիմայ քարի մը տակ կը հանգչի,
 Գիտեմ՝ մայրս ալ պիտի մեռնի,
 Խեղճ կինը ինքն ալ գիտէ,
 Եւ իր որդին ալ պիտի որջ չը մընայ :

Գիտեմ՝ աղքատ կամ հարուստ,
 Խելօք կամ խենթ, քահանայ կամ աշխար-
 հական,
 Տոհմիկ, գուեթիկ, վեհանմն ու ժլատ,
 Մեծ ու խոնարհ, աղւոր ու տգեղ,
 Տիկիներ՝ բաց օծիքով,
 Ռամիկ կամ բարձր աստիճանով,
 Վրայով գլխով շքեզազարդուած,
 Մահն ամենքն ալ պիտի տանի :

Մեռան Պարիսն ու Հեղինէն .
 Ու ցաւերով կը մեռնի ով որ մեռնի .
 Շունչը բուր կը կտորի,
 Մաղձը սրտին վրայ կը պայթի .
 Ու կը քրտնի՝ Աստուած գիտէ ի՛նչ քրտինք .
 Եւ չըկայ մէկն որ անոր ցաւն ամոքէ,
 Վասըն զի ոչ զաւակ, ոչ քոյր, ոչ եղբայր
 Կ'ուզէ անոր տեղն անցնիլ այդ միջոցին :

Մահը գանի կը դողացնէ, կը գունատէ,
 Վար կը կախէ քիթն, երակները կը պրկէ,
 Կ'ուռեցընէ վիզն ու միսերը կը թուլցնէ,
 Ջիղ ու յօդերը կ'աճեցնէ կը տարածէ :

Ո՛վ կանացի մարմին, որ այնքան փափուկ ես
 Ողորկ, անո՛ւշ, այնքան անգին,
 Պէ՛տք է սպասես այդ ցաւերուն .
 Այո՛, կամ շո՛ւտ երկինք երթաս :

Ինչպէս կը տեսնուի, Վիյեոնի այս երգե-
 րուն մէջ գերակշռողը՝ ցաւն է կեանքի զազ-
 փողփութեան ու սարսափը մահէն . բայց նոյն
 իսկ այդ ցաւատանջ աւազանքի եւ արհաւիրքի
 տողերը կը վերջանան՝ « Երկինք » բառով .
 Վիյեոն, որ՝ աւագակներու ընկերակցութեան
 մը անդամ՝ կախաղանի վրայ մեռաւ, շատ խա-
 խուտ հաւատք մը ունենալու էր՝ հաւատք մը
 իր սովորական հեգնութիւնովն օծուած՝ եթէ
 երբեք ունէր ո եւ է հաւատք . բայց նորէն,
 իր յուսահատութեան աղաղակը « Երկինք »ի
 յոյսին կը յանգի, որովհետեւ եթէ կայ պահ
 մը ուր ամենէն կարծրացած անհաւատն իսկ
 կը քաղձայ կարենալ վերագտնել նախահայրե-
 ռու միամիտ ու սիտիարար հաւատքը, այն
 վայրկեանն է ուր Մահը կը ցցուի իր առջեւ . . . :
 Երգնկացիին քերթուածը, թէեւ կը սկսի ու կը
 վերջանայ վարդապետական բանաձևերով, ուր
 վանական կենսատեցութեան սեւ մշուշը կը
 տարածուի, բայց իր այն տուներուն մէջ ուր
 կ'ողբայ Մահէն զգետնուած քաջերը որ ա՛լ չեն
 կուրի, մեծերը որ հողու հաւասար են դարձած,
 աղւորները որոնցմէ սակորներ միայն կը մնան,
 եթէ « Մեծ Կտակ »ին յիշեալ հատուածին քսու-
 մնեցուցիչ ուժգնութեանը չի հասնիր, կը հաւա-
 սարի « Երբեմնի գեղուհիները » ու « Երբեմնի իշ-
 խանները » պալլատներուն մէջ թրթռացող
 յուզմանը ու թերեւս կը գերազանցէ զայն .
 Երգնկացիին մէջ անշուշտ շատ աւելի ընդ-
 լայնուած, շեշտուած է երկնաւոր կեանքին
 յոյսը, որ ամուր հաւատք մըն է իր մէջ, եւ
 ատով՝ իր քերթուածը տեսակ մը տրտմանոյ՝
 հանդարտութիւն կը ստանայ զոր չունին Վիյ-
 եոնի գրեթէ անխառնօրէն դառն տողերը . բայց
 դարձեալ, երկրաւոր կեանքի ունայնութիւնը
 հռչակելով ու երկնաւոր կեանքին մէջ միայն
 իրական ու անանց երջանկութիւնը գաւանդելով
 հանդերձ, Երգնկացի կը թուի աւաղել՝ խորա-
 պէս անկեղծ յուզմունքով մը՝ մարդկային քա-
 ջութեան, գեղեցկութեան, երիտասարդութեան
 ծաղիկներուն ողորմելի զաղփաղփութիւնը .

հոտ , իր ձայնը՝ այդ երկրաւոր հրապոյրները վայրագ արհամարհանքով մը ծաղրող , անարգող , կոխտուող մոնաղի հիւանդոտ եւ անմարդկային հայհոյանքին շեշտը չէ որ կ'առնէ , այլ կը թուչնայ , կ'արցունքոտի՝ եղբայրական արգահատանքով մը՝ ի տես այդ բոլոր գեղեցկութեանց որ այնքան շուտ կը թօշնին . . . : Այն տողերը ուր մարդկային վաղանցուկ արեւնեւրուն անվերադառնալի մայրամուտը կ'եղբերբզէ , ամենաբարձր բանաստեղծութեան տողեր են .

. . . Այնոք որ էին քաջք ու յաղթող ի մարտ , էին աննըմանք ի հեծելոց ի յարտ , Խաղին թուր ու ըռումք ու գուրգով հետ իրաց , Հիմի այլ չը կայ տիպ ոչ տես պատկերաց , Ոչ հեծնուն ի ծի , ոչ գահեն մուրատով , Ոչ այլ գեղեցիկ երեւին սուրամով : Քակին շատ աղւոր անձն որ էր յարմարած , Ու շատ ճօհարէ ակունք որ են շարած . Այնոք որ էին ի յերկրի խիստ նազով , էին պատկերաց տէր ու դեղձան մազով , էին սուրամով զերդ լուսին ցանկալի , Սրտով խիստ ուրախ եւ խօսօք գանգալի , Երեկ տրտմութիւն հանց նոցա , եւ տարան , Որ ոչ աջք ունին կամ լեզու եւ բերան :

Թլիւորանցին եւ Նաղաշն ալ միեւնոյն նիւթին վրայ գրած են . Երզնկացիինը անհաւնապէս բարձր է Թլիւորանցիին տաղէն , իսկ Նաղաշինը թէպէտ ունի քանի մը շատ զմայլելի տողեր եւ ամբողջութեամբ գեղեցիկ կտոր մը կրնայ համարուիլ , չի հաւասարիք Երզնկացիին քերթուածին , որ աւելի լիակատար , աւելի լայն , հոծ ու խոր է , եւ աւելի լաւ գրուած :

Բացարձակապէս անթերի արուեստագէտ մը չէ անշուշտ Երզնկացին : Կան իր քերթուածներուն մէջ՝ տեղ տեղ՝ տկարութիւններ , մերթ՝ տողեր որ տափակ են կամ կը կազան . մերթ ալ՝ կարգ էարգ մը էական բառերու — սէր , լոյս , արեգակ , — դիտումնաւոր կրկնութեան սեթեւեթը՝ երաժշտական արզիւնք մը ստանալու համար գործածուած՝ ծայրայեղութեան կը հասնի եւ կը դանդաղեցնէ մտածման արտասայտութիւնը . բայց այդ թերութիւնները սակաւադէպ են , եւ ընդհանրութեան մէջ կը տիրակատէ նրբութիւն մը , վայելչութիւն մը , պստկերներու ճարտար ու դաշնակաւոր յաջորդութեան ըմբռնում մը , որուն հաւասարը մեր հին բանաստեղծներէն շատ քիչերուն քով կըրնանք գտնել :

Ս. Ղազարու միարանութիւնը մեր գրակաւութեան մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէր հրատարակելով՝ գրքի ձեւով՝ Կոստանդին Երզնկացիի բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածուն : Անտիպ մնացածներուն մէջ դեռ կան թերեւս այս կտորներուն հաւասար գեղեցկութեամբ քերթուածներ . մե՛ղք է որ այդպիսի գոհարներ մոռացումի փոշին մէջ մնան թաղուած : Նոյն իսկ եթէ հաւաքածուին միւս բոլոր կտորները տկար էջեր են , այս չորս քերթուածը բաւական է ամբողջ հաւաքածուին հրատարակումը անհրաժեշտ դարձնելու համար : Կոստանդին Երզնկացին մեր գրականութեան մէջ իր որոշ եւ — լուսապայծառ — տեղը ունի . անոր « Դիւբը » պէտք է ունենանք :

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ



Գ ար ու ճ¹

Մե՛ծ գոհութիւն , հարի՛ւր հազար ,
 Մե՛ծ աւետիք է նոր հասել .
 Եւ մեզ շնորհք յերկնաւորէն
 Յերկնից յերկիրս ի մեզ հասել :

Երկիր էր լի մութն եւ մըլար ,
 Սառն էր կապել եւ պաղ ու քար .
 Հանց որ չը կար բոյս մի դալար .
 Հիմի ինք նոր է զարդարել :

Ձրմեռնն բանտ էր եւ խաւար .
 Գարունն եհաս ու նոր բահար ,
 ' Ի էառ ի մէջ՞ գիշերն աւար .
 Ձի արեգակն է մեզ ծագել :

Երկիրս է մայր անմումանի ,
 Ձինչ գեղեցիկ իրք՝ ծընանի ,
 Շատ բարութիւնք յինք սընանի ,
 Հանց որ փռնն (?) գեղեցկացել :

Երբոր հնչեց հողմըն հարաւ՝
 Ձինչ արտութիւն՝ յերկրէ տարաւ .
 Հանց որ չը կայ տեղ մի ծարաւ ,
 Ամէնն են բարութեամբ լըցել :

Հեզ որոտաց ամբ ցողաբեր ,
 Կամար կապի յերկինս ի վեր ,
 Հոսէ յերկիր ահեզ գետեր ,
 Հաւսար զերկիր են արբուցել :

Է հարսանիք տիեզերաց ,
 Է ցնծութիւն պողաբերաց ,
 Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց
 Ծաղկունք զերկիր են զարդարել :

Ծովըն դըրուրդ առնու սիրով ,
 Խաղան զեռունք յերկիր ու ի ծով .
 Ակունքդ յորդոր գան պաղ ու հով ,
 Եւ ի բարէն յառաջ բղխել :

(1) Այս տիտղոսը մենք աւելցուցած ենք :

Ահեզ գոչեն գետերդ յուով
 Յորդ ի լերունքդ ի վայր գալով ,
 Գան մանիման ծաւալելով ,
 Սիրով ի ծովն երես դըրել :

Խաղան եղունք եւ այծեմունք ,
 Իջնուն ի դաշտ 'ւ յաղբերակունք .
 Երէվայրիք եւ անասունք
 Ի կապանաց են արձակել :

Հաւերդդ գան քաղցր ձայնով
 Ծիծեռն ի հետ սաղմոսելով .
 Գայ արտուտիկըն կարգալով ,
 Ձառանուտուն է բարբառել :

Աճումն առնուն եւ ծընանին
 Հաւք ու դազանք 'ւ երէվայրին .
 Ձագօք հաւերդ հլնեն պարին ,
 ' Ի են միարան երամ կապել :

Ծաղկունքըն գան եւ ժողովին ,
 Ի բուրաստան 'ւ ի պաղչանին .
 Մէկ մի մըտել ի մէջ ծովին ,
 Տեսն է դեղին 'ւ յերեր կացել :

Բլբուլն եհաս շաքարբերան ,
 Աւետարեք մեծ յարութեան .
 Վարդին եհար կանանչ վըրան ,
 Որ գայ բազմի զերդ հուր վառել :

~~~~~

## Բ Ա Ն Ք Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Ն Յ Ա Ի Ո Ր Մ Ե Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

~~~~~

Այր մի կայր և Շահնամայ ասէր ձայնով . նայ եղբարք խնդրեցին թէ « ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասա՛ » . ես շինեցի զրանքս զայս . ի Շահնամայի ձայն կարգացէք .

Յանուն անեղին Աստուծոյ եւ մեծին ,
 Յանուն Հօր եւ Որդւոյն որ է միածին ,
 Յանուն ճշմարիտ սուրբ Հոգւոյն յաւիտեան ,
 Որ մի տէրութիւն է հզօր ի յատեան ,

Ակսայ բան խօսիլ հասարակ սիրելեաց ,
 Բանալ ձեզ դրունք ի մտաց սքանչելեաց ,

Շարել մարգարիտ ու ակունք լուսատու ,
ծուցանել գեղեցիկ ձեզ բաներ խըրատու ,

Լըսել սլարտ է մեզ բանք յիմաստասիրաց ,
Կամաւ հեռանալ մեզ ի զատ յանդիտաց ,
Չլինել կարճամիտ եւ ի սրտէ թերի ,
Չլինել մարմնոյն մեր ծառայ եւ գերի :

Այս կեանքս է ունայն եւ ժառանգք են մահու ,
Չունի մեզ դրունք բարութեան եւ շահու .
Երազ է խաբող եւ խայալ անցաւոր ,
է սուտ սիրելի եւ ընկեր նենգաւոր :

Ցուցնէ մեզ սիրոյ դուռն ու տայ շատ նիշան ,
Բայց է ի ծածուկ գազանի պէս եւ շան .
Նստեալ է սաղիսայ ի մեծ ջամիթ ,
Հանեալ զիր ոչինչ սուտ բաներն ի դիմաթ :

Չգիներն որ բաժնէ՝ կայ ի ներս մահու գեղ .
Ոմանք որ խմեն՝ արբենան ցեղուցեղ .
Հոգւով են մեռած ու թըւին կենդանի ,
Ով որ ինք խմել յայն գինուն շիշանի .

Սարխօջ են դարձել սրտերովն ի մուրատ
Ընկել են բեռաւ մ' ծանտըր(1) ի մեծ գէշ մօրատ,
Չունին աչք մըտաց , ոչ հային աստ եւ անդ ,
Չը գիտեն թէ կապել կան ի յերկաթ 'ւ ի բանդ :

Հասեալ են ի դուռն ի մահուն բէխապար ,
Չգիտեն թէ խորել են ի ծով գերդ կապար .
Անուշ պարարին գերդ զանասուն յիմար ,
' Ի ի ներքեւ ցաւով կան ի լի 'ւ են բիմար :

Այսօր կան յորդոր եւ զյեզուց չանդիճեն ,
Որ լան արտասուօք եւ անեղ հառաչեն .
Ահա մահըն գայ եւ գտնու շատք ի քուն ,
Չմնայ յինք ի մօտ իրք ծածուկ կամ թագուն :

Ի հուքմ ինք ունի շատ թաճով փատիշահ .
Ու փոքր ու . . . (պակաս) . . . դան 'ւ ի չահ ,
Տանի զամեն մարդ , յիբ մուրատէն գերի ,
Հանց որ ի շատոց սիրտ անչէջ հուր կ' էրի :

Չթողու ինք սուլդան ոչ փատիշահ ի թախթ ,

(1) «Բազմավէպ» ին մէջ՝ բեռաւմ ծանցեր :

Աւնու շատ սովլաթ՝ թէ հզօր է անյաղթ ,
Չվախէ ի գօրաց՝ թէ քաջ են փահլավան .
Շուտով թէզ հողոյն առնէ զիրենք հաւան .

Թէ լինի հզօր փատիշահ գերդ Ղազան ,
Չմնայ՝ քանի է ինք սրտով գերդ գազան :
Չայն ոք որ սուրաթով լինին գեղեցիկ՝
Քաղէ գերեօին գոյնն որ է գերդ ծաղիկ .

Ոչ մնայ այն որ է ինք անձամբ վայելուչ ,
Ոչ այն որ է տրտում կամ սրտովըն հուչ ,
Այն անձն որ վայել լինի շատ բարութիւն՝
Մտնէ(1) ինք ի նեղ բանտ 'ւ ի շատ գերութիւն .

Այն որ հագանէր ինք հանդերձ ոսկեկար ,
Շարած յիր վերայ էր մարգարտով չըբար ,
Հիմի հաւանել է ի մի տակ (2) քաֆան ,
Լըսել է իր շատ քիպր ու ջավր ու ջաֆան :

Այն որ սուռն ունէր զարդարած եւ տաճար ,
Շինած ամէն ոսկւով ու նախ ի նիզար ,
Ունէր թաճ աղամբք , ու իր կար թախթ ի գառ ,
Հիմի է իս'ր մնացել (3) բէխապար :

Այնք որ բոլոր աշխարհիս տէր եղան ,
Սուլդան ու թագաւոր փատիշահ ու դան՝
Ունին գանձ անթիւ ու հեծել բէշըմար ,
Շուտով յայն փառացն եղեն գէր ու զապար :

Շատոց վերանայ հուքմ ու թուղթ ու դալամ ,
Շատոնց խափանի յատ ու տապլ ու յալամ ,
Այնք (4) որ էին քաջք ու յաղթող ի մարտ ,
Էին աննրմանք ի հեծելոց ի յարտ ,

Կաղին թուր ու ըռուժք ու գուրդով (5) զհետ
իրաց ,

Հիմի այլ չկայ տիպ ոչ տես պատկերաց .
Ոչ հեծնուն ի ձի , ոչ գահեն մուրատով ,
Ոչ այլ գեղեցիկ երեւին սուրաթով :

(1) «Բազմավէպ» ին մէջ՝ մեծ :

(2) «Բազմավէպ» ին մէջ՝ միս սակ

(3) «Բազմավէպ» ին մէջ՝ մնացել

(4) «Բազմավէպ» ին մէջ՝ Այն ոք

(5) «Բազմավէպ» ին մէջ՝ գուրդով (ստեղծեամբ , ըստ «Բազմավէպ» ի) .

Քակին շատ աղւոր անձն որ էր յարմարած .
 Ու շատ ճօհարէ աղունք որ են շարած ,
 Այնոր որ էին ի յերկրի խիստ նազով ,
 էին պատկերաց տէր ու դեղձան մազով .

էին սուրաթով զերդ լուսին ցանկալի ,
 Սրբտով խիստ ուրախ ու խօսօք դանգալի .
 Երեկ տրամուծիւն հանց նոցա եւ տարան
 Որ ոչ աչք ունին ոչ լեզու կամ բերան :

Դարձեալ են փոշի եւ ոսկերք են ցամաք ,
 Այն անձն որ պայծառ էր քան զձիւն սպիտակ :
 Եղբա՛յրք , լսեցէ՛ք զայս ի սրտէ սիրով՝
 Որ ես շինեցի զբանքս ի մըտաց զըրով :

Ոչինչ է այս կեանքս ու չունի դիւրութիւն .
 Դու այլ մի՛ խաբիր, թէզ զարթի՛ր, Կոստանդին .
 Յանուն անեղին Աստուծոյ եւ մեծին ,
 Յանուն Հօր եւ Որդւոյն որ է՝ միածին :

ՍԷՐ ԵՒ ԱՌԱՒՈՏ

Բանք յերկու դէմս մնաց , ճետութիւնք , ի հոգի եւ ի մարմին գոր առաւիփ խօսի այսպէս .

Ջարթիք ի յերազուդ , բացէք զաչերդ ով կայք ի քուն .
 Տեսէ՛ք ի մէջ գիշերիդ շատք որ պահ մի չեն լել ի քուն .
 Անգաղար ի շուրջ գալով կան հրամանաւ մի Աստուծուն ,
 Որ բանիւ զերկինքն ի վեր կամար կապել երես քամուն :

Ջարթայ ես ի քնոյս՝ ելայ , քամուն կացի պահ մի արթուն .
 Երբ էանց գիշերն յերկար՝ նշան եղեւ առաւօտուն .
 Տեսի լուսին պայծառ , բազում աստեղք ի յիր սպասուն .
 Ջերկինքն են զարդարել 'ւ են արարածք Իմաստնոյն :

Մի աստղ ելաւ պայծառ առջեւ արուսեկին լուսոյն ,
 Ունէր լոյս գեղեցիկ քան զաստեղացն գերագոյն ,
 Ետես նա ըզլուսին եւ հըրաման տայ աստեղնոյն .
 Հաւասար ի մայր մտան , նուազեցան յիրենց լուսոյն :

Ջերեսս երկնից եբաց՝ երբոր ծագեց լոյսն արեւուն .
 Տղա՛յ երեւեցաւ , քաղցր կոչի իրենն անուն .
 Հոգի հաւսար երես շատոց պայծառ լոյս աչերուն ,
 Ով սիրով մնաց լուսոյն արուսեկին առաւօտուն :

Քաղցր է ծնունդ լուսոյն , երանի տամ ես այն մարդոյն
 Որ բաժին ինքն ունենայ ի յայն լուսոյն առաւօտուն .
 Թէ գունն երկնից կայ պարգեւատու մի Աստուծուն՝
 Ի ծագելն արեգականն ի մեզ բացվի զուռն բարոյն :

Թէ Տէրն ի յարարածս հայի քաղցր ի յիր սիրուն .
 Յայն պահուն է որ լինի նշան լուսոյն առաւօտուն .
 Թէ լսէ աղաչանաց եւ աղօթից շատ կարգալուսն՝

Ով խնդրէ թէ՛ղ գտանել զպարգիւքն՝ առնու առաւօտուն :

Թէ անուշ հոտ կայ բուրել՝ և ի կեանք փոխէ զդուռն մահուն ,
Են շատոց հոգի հարբած յանոյշ հոտոյն առաւօտուն .
Թէ անմահական սէր կայ՝ որ հոգի տայ հոգեստնուն՝
Իմ բաժին սէրն ու հոգին խառնել ի սէրն առաւօտուն :

Թէ ինձ կեանք կամ խնդութիւն բաժին կայ ի դուռն ի սիրուն ,
Մէկ պահու սէրն ի սրտէ՝ թող լինի ինձ յառաւօտուն .
Թէ հոգի տալ կուպիտի , կամ թէ հոգի հանել մարդուն ,
Նայ յօժար եմ ես հոգւով զհոգիս փոխան տալ իմ սիրուն :

Ով կամի սիրով լինել ինքն յարութեան որդի լուսոյն ,
Թող խնդրէ ի յայն Սիրոյն որ ինք յարեաւ առաւօտուն .
Ի սիրուն սէր յաւելու սիրով գնալ տունն ի Սիրուն ,
Ի ով Սիրոյն ինք հետեւի՝ համնի սիրովն առաւօտուն :

Տէ՛ր գթա յիս ի ծառայս եւ տո՛ւր բաժին ինձ յայն հոգւոյն ,
Որ շատոք են ցանկացել , բայց քիչք հասան առաւօտուն .
Ես յեախնս եւ անպիտանս որ կոստանդին կոչի անուն ,
Խնդրեմ ի քէն , տուր ինձ սէր ի սիրուն առաւօտուն :

Բանք յաղագս արեգականն արդարութեան որ եւ ծագեաց ի չօրէ միաժին որդին Քրիստոս ,
զոր առակօք խօսի այսպէս .

Ահա գիշերս էանց , նշան եղեւ առաւօտուն ,
Աստղն պայծառ ծագեց , աւետաւոր երեկ լուսոյն .
Խաւարն հերքեցաւ ու ցնծացաւ աշխարհքս ամէն ,
Երնէկ ետուն միմեանց՝ որ արժանի եղեն լուսոյն :

Զինչ որ ի բանդ կային եւ ի խաւար ի խոր զնդան՝
Նայ լոյս ծագեց նոցա յարեգականն ի մեծ լուսոյն .
Երկիրս էր սառն ու պաղ ու ցուրտ ձմեռն հողմային ,
Ահա եղեւ գարուն յարեգականն ի մեծ լուսոյն :

Երկիր կենդանացաւ ու լեռն ու դաշտ կանանչ բուսան ,
Ծաղիկ բերին ծառերն յարեգականն ի մեծ լուսոյն .
Ծաղկունքն զարդարին ազգի ազգի գոյնզգոյնով ,
Փոխ վարդն կարմիր յարեգականն ի մեծ լուսոյն :

Ակունքդ յորդորին ու ցնծալով յառաջ խաղան ,
Գետերդ ոլոր կապեն յարեգականն ի մեծ լուսոյն .
Զինչ որ կայ արարած՝ անհոգի մեռած կային ,

Ահա կենդանացան յարեգականն ի մեծ լուսոյն :

Է՞ր չէք ի զարմանալ , ու կամ հարցուկ լինել բանիս ,
Վասն այս արեգականս ու իր պայծառ լցեալ լուսոյն .

Այս նո՛ր ծագեց մեզ լոյս բան զարեգակն ու այլ պայծառ ,
Զինչ լուսաւորք կային՝ ծառայ կոչին այն մեծ լուսոյն ,

Ի լուսոյն ի սկզբանէ լի լուսով շառաւիղ ծագեց ,

Լոյս ի լուսոյ ծնաւ յարեգականն ի մեծ լուսոյն .

Այս լոյսս ի յայն լուսոյն՝ որ ինքն է տէր ամեն լուսոյն ,

Ու թագաւոր կոչի , 'ւ ամենուն լոյսն ի յիր լուսոյն :

Երկնից կամարն եղեւ ի զարմանալ արեգականն ,

Զի չէր տեսեալ հանց լոյս կամ արեգակն ի յայն լուսոյն .

Երկիրս ցնծացաւ մեծ աւետեօք ուրախացան ,

Թէ անմուտ ծագեց մեզ լոյս արեգականն ի յայն լուսոյն :

Ոմանք են անհոգի աչերով կուր եւ անյիմայ ,

Որ չեն ի հաւատալ արեգականն ու իր լուսոյն .

Խաւար կենօք կենան ու զմբաղին յերազ քնոյ ,

Չունին մասն լուսոյ յարեգականն ի մեծ լուսոյն :

Ես չեմ ի հաւատալ այն սուտ հողւոյն թէ ինքն լոյս՝

Որ չունի շառաւիղ յարեգական ի մեծ լուսոյն .

Ես՝ Կոստանդին՝ գրեցի , կու փափաքիմ ի յայն լուսոյն՝

Որ ես լուսաւորիմ յարեգականն ի մեծ լուսոյն :

Կոստանդին Երզնկացի

Գ Ա Ր Ո Ի Ն

Մեծ գոհութիւն, հազար անգամ մեծ. մեզի մեծ աւետիս մը հասեր է նոր , եւ Երկնաւորին մէկ շնորհքը երկնքէն երկիր մեր վրայ է հասեր :

Երկիրս մթութեամբ լեցուն էր ու մոլար , սառ կապած էր , պաղ , քար կտրած . չկար ոչ մէկ բոյս մը դալար . հիմա նորէն է զարդարուեր :

Զմեռը բանտ էր ու խաւար . ահա հասաւ նոր գարունը , գիշերը մենէ աւարեց տարաւ , վասն զի արեւն է ահա ծագեր :

Երկիրս մայր մըն է աննրման , կը ծնի ինչ-

բան որ գեղեցիկ բան կայ , շատ բարիքներ կը սնանին իր ծոցին մէջ . ահա փռուեր է գեղեցիկ(?) :

Երբ հարաւի հովը փչեց , ինչքան տըրտմութիւն կայ՝ տարաւ երկրէս . այնպէս որ չըկայ տեղ մը ծարաւ , ամէն կողմ բարիքով է լեցուեր :

Չեզ որոտաց ամպը ցօղաբեր , կամար կապեց երկինքն ի վեր , երկրիս վրայ կը հոսէ անեղ գետեր , որ բոլոր երկիրը կ'արբուցանեն :

Չարսնիքն է տիեզերքին , ցնծութիւնն է պտղաբեր ծառերուն . գոյնզգոյն տեսակ տեսակ ծաղիկներ ահա երկիրն են զարդարեր :

Ծովը թունգ կ'ելլէ սիրատարփ . գնդունները

կը խաղան ցամաքի վրայ ու ծովուն մէջ . ա- կունքները արագ կուգան պաղ ու դով , ժայ- ուերէն բղխած :

Ահեղ կը գոչեն գետերը բազմաթիւ . լեռ- ներէն վար իջնելով յորդաջուր , կուգան մա- նիման ծաւալելով , սիրով գէպ ի ծովը կ'ուզ- ղուին :

Կը խաղան եղնիկներն ու այծեամները , դաշտն ու աղբերակունքը կ'իջնեն . վայրի երէ- ներն ու անասունները կապանքներէն արձակ- ուեր են :

Կուգան թռչունները քաղցր ձայնով ծիծեռ- նակին հետ սաղմոսելով . կուգայ արտուտիկը երգելով , առտուան սաղը կը ձայնէ :

Կ'ածին ու ձագեր կը ծնին թռչունները , գազաններն ու երէվայրիները . թռչուններն իրենց ձագերով կ'ելլեն պար կը կազմեն ու մէկտեղ երամ կը կապեն :

Մաղիկները կուգան կը ժողովին բուրաս- տաններուն ու պարտէզներուն մէջ . անոնցմէ մէկը ծովն է մտեր , տեսն է դեղին , ու կը դողդղայ :

Բլբուլն եկաւ շաքարբերան , աւետարեր մեծ յարութեան . վարդին համար կանանչ վրան մը կանգնեց , որ ան գայ հոն բազմի ինչպէս կրակ մը վառած :

ԱՆՑԱԻՈՐ ՄԵՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Մէկը կար որ « Եստիմե » կ'արտասանէր « ձայնով » . եղբայրներ խնորհեցին Թէ « Եստիմե » ի ձայնով ոտանա- ւոր մը ըսէ' » . Էս ալ շինեցի սա բերթուածը . « Եստ- նամէ » ի ձայնով կարդացէք:)

Յանուն անեղ ու մեծ Աստուծոյ , յանուն Հօր ու միածին Որդւոյն , յանուն ճշմարիտ սուրբ յաւիտենական Հոգւոյն , որ միակ տէ- ռութիւն մըն է հզօր ատեանի մէջ .

Սկսայ խօսիլ բոլոր սիրելիներուն , բանալ ձեզի զոներ սքանչելի մտածմանց , շարել մար- գրիտներն ու ակունքներ լուսատու , ձեզի ցոյց տալ խրատական գեղեցիկ խօսքեր :

Մենք պարտինք լսել իմաստասէրներու խօս- քերը . տգէտներէն կամուս հեռանալ , չըլլալ

կարճամիտ եւ սրտով թերի , չըլլալ մեր մարմ- նոյն ծառայ ու գերի :

Այս կեանքն ունայն է եւ մահու ժառան- գութիւն . չունի մեզի համար դռներ բարիքի եւ շահու . երազ է խաբող եւ ցնորք անցաւոր , սուտ սիրական է եւ նենգաւոր ընկեր :

Սիրոյ դուռը կը ցուցնէ եւ երեւոյթներով մեզ կը շլացնէ , բայց ներքնապէս նման է գա- զանի եւ շան . մեծ ակումբի մէջ նստած է հան- դիստ , եւ իր սուտ ու ոչինչ բաները մեծ գնով ծախել կը ջանայ :

Գինիին մէջ զոր կը բաժնէ , թոյն կայ մա- հու . ոմանք որ կը խմին՝ կերպ կերպ կը պի- նոյնան . հոգիով մեռած են ու ողջ կը թուին , անոնք որ այդ գինիին շիչէն խմեր են :

Գինով են դարձեր՝ իրենց ըզձատենչ սրտե- րովը . ծանր բեռով մը մեծ գէջ տղմուտի մը մէջ են ինկեր . ա'լ չունին մտքի աչք , հոս ու հոն չեն նայիր , չեն գիտեր թէ բանտի մէջ եր- կաթներով կապուած են :

Մահուան դուռն են հասած եւ լուր չունին , չեն գիտեր թէ կապարի պէս ծովուն խորն են իջեր . յիմար անասունի պէս անուշ կը պարա- ըին , ու ներքնապէս ցաւով լեցուն են ու հի- ւանդ :

Այսօր զուարթ են եւ չեն մտածեր թէ վաղը պիտի լան եւ անեղ հառաչեն . մահը պիտի գայ եւ շատերը քունի մէջ գտնէ . անոր համար ո՛չինչ կայ ծածուկ կամ թագուն :

Անոր իշխանութեան տակ թագակիր արքա- ները , ու , կը տանի ամէն մարդ՝ իր տենչերուն գերի , շատեր որոնց սրտին մէջ անչէջ հուր մը կ'այրի :

Չի թողուր ոչ սուլթան ոչ փատիշահ զահու վրայ , կը տիրէ շատ պետութեանց՝ հզօր ըլլան կամ անյաղթ , չի վախնար զօրքերէ՝ քաջ ըլլան թէ հուժկու , շուտով զանոնք հողուն մէջ կը պառկեցնէ :

Նոյն իսկ թագաւոր մը , Ղազանի չափ հզօր , չի տեսեր , որովհետեւ ան գազան է սրտով . անոնք որ գեղեցիկ են դէմքով , կը քաղէ երես- նուն ծաղկի պէս դոյնը :

Չի մնար ան որ վայելուչ է անձամբ , ոչ ալ ան որ տրտում է կամ սրտովը հուչ(?) . ան որ շատ բարիք է վայելած , նեղ բանտը կը մտնէ ու գերի կը դառնայ :

Ան որ ոսկեկար հանդերձ կը հագնէր, իր վրայ կը շարէր մարգարտայեւ զարդեր, հիմա կը շատանայ միածալ պատանքով, լոեր է անոր հպարտութիւնն ու ցաւն ու տանջանքը :

Ան որ տուն ունէր զարդարած եւ տաճար, ամբողջ ոսկիով շինուած ու գեղանկարուած, ականակուտ թագ ունէր եւ գահ ոսկեղէն, հիմա խոր (քունի մէջ) մնացեր է զգայազիրկ :

Անոնք որ բովանդակ աշխարհիս տէր եղան, սուլթան ու թագաւոր, փառիշտ ու խան, անոնք որ անթիւ գանձեր ունէին եւ անհամար ձիաւորներ, շուտով զրկուեցան այդ բոլոր փառքէն :

Շատերը կը կորսնցնեն իշխանութիւն, թուղթ ու գրիչ : շատերը կը մնան անօգնական, անթմբուկ, անդրօջ : անոնք որ քաջ էին ու պատերազմի մէջ յաղթող, անոնք որ անմամն էին ձիաւորներու դաշտին մէջ :

Անոնք որ իրարու հետ թուրով, սուբուրով ու գուրգով կը մրցէին, ա՛լ հիմա ոչ կերպարանք եւ ոչ դէմք ունին, ոչ ձի կը հեծնեն ոչ սրտանց կը կուռին, ոչ ալ գեղեցիկ կ'երեւան դէմքով :

Կը քայքայուին շատ աղւոր վայելչակազմ մարմիններ, ինչպէս եւ իրենց վրայ շարուած գոհարները, էնոնք որ երկրիս վրայ այնքան նազուկ էին, գեղեցիկ դէմք ունէին ու գեղձան մազեր :

Երեսներն նման էր ցանկալի լուսնին, սրտերնին ուրախ, խօսքերնին զուարթ. այնպիսի տրբամուծիւն մը եկաւ վրանին, որ ելան գացին. ու հիմա ոչ աչք ունին, ոչ լեզու կամ բերան :

Փոշի են զարձեր եւ ցամաք ոսկոր, այն մարմինները որ պայծառ էին քան ձիւնն սպիտակ : Եղբայրներ, սրտանց՝ սիրով լսեցէք այս խօսքերս զոր մտքովս յօրինեցի եւ ի գիր առի :

Այս կեանքը ոչինչ է եւ հաճոյք չունի. դուն ալ մի՛ խաբուիր, շուտ արթնցիր, կոստանդին, յանուն Հօր եւ Որդւոյն միածին :

ՍԷՐ ԵՒ ԱՌԱՒՈՏ

houf երկու իմասով, ակնարկութիւն հոգւոյն ու մարմնոյն որ այլաբանօրէն բնուած է սապէս.

Արթնցէք ձեր երազէն, աչքերնիդ բայէք,

զուք որ կը քնանար. տեսէ՛ք, գիշերուան մէջ շատեր կան որ պահ մը քուն չեն եղած. անդադար պտրտկելով կը սպասեն՝ հրամանովը միակ Աստուծոյն, որ մէկ խօսքով երկինքը կամարածեւ յօրինեց ու հովին յանձնեց :

Արթնցայ քունէս, ելայ պահ մը արթուն կեցայ հովուն դէմ, երբ երկայն գիշերը կ'անցնէր ու առաւօտը նշան կուտար. տեսայ լուսինը պայծառ ու շատ մ'աստղեր անոր սպասարկու, որ երկինքը կը զարդարէին ու արարածներն են Իմաստունին :

Պայծառ աստղ մը կըլաւ արուսեակին լոյսին առջեւ. ունէր լոյս մը գեղեցիկ, աստղերուն լոյսէն ալ գերազանց. նայեցաւ լուսնին ու հրաման տուաւ աստղերուն, եւ բոլորը մէկ մարմտան ու լոյսերնին նուազեցաւ :

Երկնքին երեսը բացուեցաւ երբ ծագեցաւ լոյսն արեւուն. երեւցաւ՝ դեռ մանուկ. ի՛նչ անուշ է իր անունը. շատերուն հոգի տուաւ, ու պայծառ լոյս աչքերուն, անոնց որ սիրով սպասեցին առտուան արուսեակին լոյսը տեսնելու :

Քաղցր է ծնունդը լոյսին. երանի կուտամ այն մարդուն որ բաժին կ'ունենայ առաւօտեան այդ լոյսէն. Եթէ երկնքին դրան առջեւ կը կենայ Աստուծոյ մէկ պարգեւատուն, արեւուն ծագած ատենն է որ բարիքներուն գուռը կը բացուի մեզի :

Եթէ տէրը իր արարածներուն վրայ քաղցր կը նայի՝ սիրով լեցուած, այն պահուն է երբ առտուան լոյսը կը ձեղքուի. եթէ (միշտ) կը լսէ աղաչանքներուն եւ բազմապատիկ աղօթքներուն, պարգեւը շուտ ստանալ ուղղորդ՝ զայն կ'ընդունի առաւօտուն :


Եթէ կան անուշ հոտեր որ մահուան դուռն իսկ կեանքի կը փոխեն, շատերուն հոգին դիտովցած է առաւօտեան անուշ հոտէն. եթէ կայ սէր մ'անմահական որ հոգի կուտայ հոգինւրուն, (կ'ուզէի) իմ բաժին սէրս ու հոգիս առաւօտեան սիրոյն խառնել :

Եթէ սիրոյ դռնէն ինծի բաժին սահմանուած է կեանք ու խնդութիւն, ես կը նախընտրեմ մէկ պահու սէրը սրտանց՝ առաւօտուն. եթէ պէտք է հոգի տալ, ես բոլոր հոգեւովս յօժարեմ հոգիս տալ այդ սիրոյն փոխարէն :

Ով որ կ'ուզէ սիրով ըլլալ որդի լոյսին յա-

րութեան , թող խնդրէ այն Սէրէն որ ինքն ալ յարեալ առաւօտուն . սէրէն սէրը կ'աւելնայ , սիրով երթալ տունը Սիրոյն . ով որ Սիրոյն կը հետեւի , կը հասնի՝ սիրովն առաւօտուն :

Տէ՛ր , գթա՛ ինծի՛ քու ծառայիդ , եւ ինծի բաժին տուր այն հոգիէն , որուն շատերն են ցանկացած եւ զոր քիչերն ունեցած են առաւօտուն . ես՝ յետինս եւ անպիտանս , որ Կոստանդին կը կոչուիմ , կը խնդրեմ քեզէ , աո՛ւր ինծի սէր առտուան սէրէն :



houf աղաբարեան արեգակին մասին, Քրիստոս միածին որդոյն , որ ծագեցաւ Հօրմէն , այլաբանօրէն քուած .

Ահա զիչերն անցաւ , եւ առաւօտը կը բացուի . ծագեցաւ աստղը պայծառ , աւետիսը բերաւ լոյսին . խաւարը վանեցաւ ու ցնծաց աշխարհս բովանդակ . երանի տուին իրարու անոնք որ արժանի եղան լոյսին :

Անոնց վրայ որ բանտի մէջ էին ու խաւար ու խոր զնդանի մէջ , լոյս ծագեցաւ արեգակին մեծ լոյսէն . երկիրս սառ ու պաղ էր՝ ցորտ ձմեռուան տակ հողմային . ահա գարուն եղաւ՝ մեծ լոյսովն արեգակին :

Երկիրը կենդանացաւ եւ լեռ ու դաշտ կանանչ բուսան , ծառերը ծաղիկ բերին՝ մեծ լոյսովն արեգակին . ծաղիկները կը զարդարուին տեսակ տեսակ գոյներով , կը փռուի վարդը կարմիր՝ մեծ շոյսին տակ արեգակին :

Ակունքները կ'երազանան ու ցնծալով յառաջ կը խաղան , գետերը ոլորքներ կը յօրինեն , մեծ լոյսին տակ արեգակին . բոլոր արարածները , որ մնացած էին անհոգի ու մեռած , ահա կենդանացն մեծ լոյսովն արեգակին :

Ինչո՞ւ չէք զարմանար կամ հարցումներ ուղղեր այս խօսքիս մասին , այս արեգակին եւ իր պայծառ լիալիւր լոյսին նկատմամբ . այս նոր լոյս մըն է որ ծագեցաւ մեղի , արեգակին լոյսէն աւելի պայծառ . ինչքան որ լուսաւորներ կան , ծառաներն են այդ մեծ լոյսին :

Ակզբնական լոյսէն ծագեցաւ շառաւիղ մը լուսալիւր , լոյսը լոյսէն՝ ծնաւ մեծ լոյսէն արեգակին . այս լոյսն այն լոյսէն է որ տէր է ամէն լոյսի , ու թագաւոր կը կոչուի , ու ամենուն լոյսն իր լոյսէն է :


Երկնքին կամարը զարմացաւ այդ արեգակը տեսնելով , վասն զի երբեք չէր տեսած այդպիսի լոյս կամ արեգակ մը ա՛յդ լոյսով . երկիրս ցնծաց , մեծ աւետիսովն ուրախացաւ , թէ ա՛յդ լոյսով ծագեցաւ մեղի արեգակ մը անմայրամուտ :

Կան ոմանք որ անհոգի են , աչքերով կոյր եւ չըմբռնող , որ չեն հաւատար արեգակին եւ իր լոյսին . խաւար կեանքի մէջ կը մնան ու քունի երազներուն մէջ կը թաղուին . անոնք մաս չունին այդ արեգակին մեծ լոյսէն :

Ես չեմ հաւատար այն սուտ հոգիին թէ լոյս ունի ինքնին , եթէ շառաւիղ մը չէ ընդունած այդ արեգակին մեծ լոյսէն : Ես , Կոստանդին , որ ասիկա գրեցի , կը փափաքեմ այդ լոյսին , որպէս զի լուսաւորուիմ մեծ լոյսովն այդ արեգակին :



Տ Ա Ն Կ Ո Ւ Տ Ի



1904 յուլիս 5ին , Թուրքերու թշնամութեանն արդիւնք եղող հրդեհ մը մոխիր դարձուց ծնած տունս ի Հասգիւղ , Ոսկեղջիւրի փերուն վրայ :

Թուրք բռնապետութեան զէմ կռուելու համար Եւրոպա ապաստանած Հայու մը նկատմամբ վրիժառութեան այս վատ միջոցը խորին զղուանք ներշնչեց ինձ :

Տխրութեամբ մտաբերեցի թէ կորուսածս հասարակ շէնք մը չ'էր , այլ մանկութեանս օրրանը , այն բոյնը ուր երեւակայութեանս առաջին թեւերը բուսած էին , զրախար այն ոսկի երազներուն որոնք գեռահաս Արիւնցիի ուղեղիս մէջ կը շողային :

Մանաւանդ պարտէզը սիրելի էր սրտիս , այն փոքրիկ պարտէզը որ այնքան ընդարձակ կը թուէր ինձ , ուր քիչ մը հանգիստ կը փնտռէի դպրոցական չարախոնջութեան ժամերէ յետոյ , մետաքսաւէտ տերեւներով թթենիին , թթու պտուղներով նոնենիին , սաթէ ողկոյզ-

ներով որթատունկին եւ զմբուխտէ գնդակներու բեռին տակ կքօղ սալորենիին միջեւ : Իր պարծանքն էր ծառիկ մը որ, Կոստանդնուպոլսոյ Անտառաբանական վարժարանի աշակերտ անդրանիկ կղօրօս ձեռքով գիտնապէս պատուաստուած, չորս տեսակ պտուղ կու տար, ի մեծ զարմացումն մեր դրացիներուն :

Մեր ընտանիքն ամառ ատեն ընդհանրապէս հոն կ'ընդունէր այցելուներն ու այցելուէիներն, աննման երկիրքի մը բնական ամպհովանիին տակ, ոչ հեռու Ոսկեղջիւրէն որ ազամանդէ գօտիի մը պէս կը շողշողար Արեւելքի հրաշափառ արեւին ճաճանչներուն տակ : Մեր թթենիի մը կտրուած կոճղը սեղանի տեղ կը ծառայէր. անոր վրայ կը դրուէր ափսէն, սուրճի գաւաթներով, անուշի ամաններով, օշարակի կամ օղիի ըմպանակներով եւ Գար'աղաճի ջուրի շիշով բեռնաւորուած :

Մեր բոլոր այցելուներուն մէջ, ինձ համար արդարեւ ամենէն համակրելին էր մօրեղբայրներէս մին : Խաչիկ Աղա էր անունը. այլ սովորաբար կը յորջորջուէր իր մականունով, որ էր Միևարե-խըղը (Միևարէի կտոր), մականուն մը՝ զոր ժողովուրդի նկարագեղ լեզուն յատկացուցած էր իրեն, իր հսկայ հասակին պատճառաւ : Քաջ մարդ մ'էր, եւ ես ա'յնքան անզուսպ խանդ մը կը տածէի դիւցազնական գործերու նկատմամբ : Միտքս, հնութեան հերոսներու յիշատակովը գինովցած, անոնց մրցակիցները կը փնտռէր ժամանակակիցներուս մէջ : Երբ Խաչիկ Աղան մեզ տեսնելու գար, իսկոյն կը ձգէր գիրքերս եւ պարտէզ կ'իջնէի : Հին թթենիի կոճղին վրայ ձեռքովս կը գնէի սրուակ մը Բիոսի օղի, շիշ մը պող ջուր եւ պնակ մը սեւ ձիթապտուղ — ասկէ ուրիշ ախորժարքեր չ'էր սիրեր —, ամբողջ մը կու տայի իրեն եւ, սալորենիին բունին կռթնած, կ'աղաչէի որ, գուցէ հարկւրբորդ անգամն ըլլալով, պատմէր ինձ իր քաջութիւնները Հասգիւղի հրեայ, յոյն կամ թուրք չարագործներուն դէմ :

« Ի՞մ քաջութիւններս, ըսաւ ինձ օր մը : Արդէն ծանօթ են քեզ, տղեկս : Մեծ բան չ'են անոնք : Դուն Տանկուտիի՝ քաջութիւնները լսելու էիր : Ծշմարիտ հերոս մ'էր նա : Տանկուտիի պատմութիւնը լսած ես կրթէք : »

Յիշեցի թէ օր մը, Հասգիւղի փողոցներուն

մէջ, տեսած էի Հայ մը, տղու մ'ընկերացած : Անցորդները մատով ցուցած էին ինձ այդ երկուքը, խորհրդաւոր կերպով մը եւ ամենախորին յարգանքի բոլոր նշաններովն ըսելով ինձ . « Ահա Տանկուտիին որդին ու թոռը : » Այլ չը գիտէի թէ ով էր այդ Տանկուտին եւ ինչ ըրած էր :

« Սիրելի մօրեղբայր, պատասխանեցի, Տանկուտիին անունը գիտեմ, պատմութիւնը չը գիտեմ : Հաճէ պատմել ինձ, կ'աղաչեմ : »

Հառաչեց, գլուխը շարժելով :

« Վէրքերս նորէն պիտի բանաս, ըսաւ ցաւազին, պատմել տալով ինձ այնպիսի մարդու մը կեանքը՝ զոր շատ սիրած եմ : Ի՞նչ քաջ, ի՞նչ քաջ : Մեր գարը ա'լ չ'արտադրեր այդպիսի կազմով մարդիկ : »

Գաւաթի մը մէջ լցուց օղին, ջուր դրաւ մէջը եւ պուտ պուտ խմեց : Յետոյ ձիթապտուղ մը կերաւ :

« Սա սեւ ձիթապտուղը, ըսաւ կուտը նետելով, շիտակը շատ կը սիրեմ : Խավեարի պէս պատուական է : »

Եւ սկսաւ պատմել .

« Տանկուտի մականունն է Հայու մը որ Հասգիւղ ծնած է 1786ի ատենները, այսինքն Ենիշէրիներու կոտորումէն քառսուն տարի առաջ : Բուն անունը Արթին էր, այլ ժողովուրդը Տանկուտի կը կոչէր՝ զայն, ինչպէս Միևարե-խըղը կը կոչէր՝ զիս : Հազիւ պատանի, նաւավար եղաւ : Իր դնդերային ուժին շնորհիւ, քիչ ատենէն Կոստանդնուպոլսոյ նաւավարներուն մէջ առաջին կարգը գրաւեց : Ոչ մէկ նաւակի թոյլ կու տար որ իր նաւակէն առաջ անցնէր : Երբ նաւավար մը յանդգնէր իր նաւակին հետապնդիլ, ձախ ոտքը ամուր մը կը հաստատէր այն գեղաքանդակ տախտակորմին վրայ որ երկու մասի կը բաժնէր իր նաւակը, եւ, թխակի մի քանի ուժեղ հարուածներով, ծովային վիթխարի թռչունի մը պէս կը թռցունէր՝ զայն Ոսկեղջիւրի, Վոսփորի կամ Պրոպոնտիսի ալիքներուն վրայ : Նաւարչաւի մէջ առաջին մրցանակը կը շահէր միշտ, ինչ որ զայրոյթ կ'ազդէր իր մահմետական մրցակիցներուն : Ի՞նչ քաջ, ի՞նչ քաջ : »

Խաչիկ Աղան ընդհատեց իր պատմութիւնը, ջրախառն օղիի գաւաթ մ'ալ կոնծելու եւ ձի-

Թապառուղ մը ճաշակելու համար : « Սա սեւ ձիթապառուղը , կը մոմոար , շիտակը շատ կը սիրեմ : Խավեարի պէս պատուական է : »

Իր պատմութեան շարունակութեանը կը սպասէի , անհամբերութենէ : տանջուած , սալուքնիին կոթնած միշտ : Շարունակեց .

« Իր առաջին քաջագործութիւնը տեղի ունեցաւ այն օրն ուր , մեր գիւղին մէկ ամայի փողոցին մէջ , պատահեցաւ դեռահաս Հայու մը ' գոր Օթուզ-Պիրի անաւոր գունդին պատկանող Ենիչէրի մը , թեւէն բռնած , դէպ իր զօրանոցը կը քաշքշէր բռնի : Պատանին օգնութիւն կը պոռար : Տանկուտին առաջ կ'անցնի առանց վարանելու , սպտակ մը կը զարնէ հեթանոսին եւ ձեռքէն կը խլէ տղեկը որ բոլոր անգամներովը կը դողդար : Ենիչէրին կ'ըսէ իբր պատասխան . Սեւ կիպի Դեառուրար պիզի գանըր հեհր (Քեզ պէս անհաւատներն են որ մարդապան կ'ընեն մեզ) : Կը քաշէ ետեւը , յանդուգն նախարարական սպանելու համար : Սա , այնքան արագաշարժ որքան կորովի , կը ցատքէ ոտիս վրայ , ձեռքէն կը խլէ զէնքը , ոտքին տակ կը ջախջախէ ետեւը շեղբը եւ , Ենիչէրիին երեսին զոյգ մը փառաւոր ապտակ փակցունելէ յետոյ , կ'ըսէ անոր . « Կեանքդ կը բաշխեմ քեզ , պայմանաւ որ ա'լ Հասգիւզ ոտք չը կոխես : Եթէ յանդգնիս գալ , գործդ կը լմնցունեմ : Եւ Օթուզ-Պիրի օգնազը , որ ա՛ն ու սարսափ կ'ազդէ Սուլթանին ու ամբողջ ժողովուրդին , չը պիտի կրնայ քեզ ազատել Փայըզձի Տանկուտի վրէժխնդրութենէն : » Նախատուած Ենիչէրիին եղելութիւնը կը պատմէ իր ընկերներուն , որոնք կ'երգնուն իրենց կաթսային եղած անպատուութեան վրէժը լուծել (1) : Քիչ ատենէն Հասգիւզ կը վերագոհնայ , իր գունդին երկու անգամներուն հետ , եւ կը սկսի պատանիին հետքը փնտռել : Սա լուր կու տայ Տանկուտիին : Յաջորդ օրը , ամայի փողոցի մը մէջ կը զսնուին երեք Ենիչէրիներուն դիակները , եւ , անոնց քով , իրենց ջախջախ ետեւը աները . . . : Ի'նչ քաջ , ի'նչ քաջ : »

Խաչիկ Աղան կ'ընդմիջէ իր պատմութիւնը , ջրախառն օղիի դաւաթ մ'ալ պարպելու եւ ձի-

(1) Ենիչէրիները դրօշակ չ'ունեին : Իրենց կաթսաները (գազան) դրօշի տեղ կը ծառայէին :

Թապառուղ մ'ուտելու համար : « Սա սեւ ձիթապառուղը , կը կրկնէ , շիտակը շատ կը սիրեմ : Խավեարի պէս պատուական է : »

Մտիկ կ'ընեմ , շուրթերէն կախուած : Կը շարունակէ .

« Կը կատակածուի թէ Տանկուտին սպանած է այդ երեք Ենիչէրիները : Քանի որ չը կար ապացոյց , տասնի չափ Ենիչէրիներ յանկարծ կը ձերբակալեն ' գաջն եւ մալուճայի մը մէջ կը նետեն Թօւրուք Աղասիին տանելու համար , տեսակ մը ոստիկանութեան նախարար , որ պիտի կարենար յանցանքը խոստովանողունել , գարչապարին վրայ գաւազանի հարուածներ տեղալով մինչեւ որ ուշաթափ ըլլար : Այս գահիճը նուազ անաւոր չ'էր Չօրպանիւն , որ ամբողջ օրը կ'անցունէր բազմոցի մը վրայ ծալապատիկ նստած եւ յուրքէն ծիւղով իր նարկիլէն , երեսնոսէ լախտերով շրջապատուած որոնցմով անխնայ կը գանակոծէր ոստիկանութեան ձերբակալած յանցաւորները եւ նոյն իսկ անմեղները :

Մալուճան , ձիագետի պէս տձեւ ու ծանր , դանդաղօրէն կը յառաջանայ Ոսկեղջիւրի մէջ : Տանկուտին իր ճակատագրին համակերպիլ կը կեղծէ , այլ միջոց մը կը փնտռէ իր սպառազէն պահապաններուն ձեռքէն ազատելու համար : Յանկարծ կը նշմարէ թեթեւ մուխ մը որ Ստամպուլի եթէ բլուրներուն մէկէն կը բարձրանար : « Սա' կողմը նայեցէք , կը պոռայ իսկոյն : Կրա'կ կայ : » Ենիչէրիները գլուխնին դէպ ի նշանակուած բլուրը կը դարձունեն մեքենապէս : աչքերնին կը բանան մուխը որոշակի տեսնելու համար , եւ կը ջանան գուշակել թէ ո'ր թաղին մէջ հրդեհ ծագած էր : Տանկուտին , առիթէն օգուտ քաղելով , հակառակ կողմէն կը նետուի Ոսկեղջիւրի մէջ եւ կը կտրէ կ'անցնի լողալով : Ծովեզրը կը հասնի , դեռ պահապաններն իրենց սալութիւնէն չը սթափած , եւ Հասգիւզ կը մանէ յաղթական : Ի'նչ քաջ , ի'նչ քաջ : »

Խաչիկ Աղան կը փորձուի ջրախառն օղիի նոր դաւաթ մ'առնուլ եւ սեւ ձիթապառուղ մ'ալ ճաշակել , « խավեարի պէս պատուական » : Կը շարունակէ .

« Այս քաջագործութեանց համարը անաղին ժողովրդականութիւն կը շահեցունէ Տանկուտիին : Բարիները կը սիրեն ' գաջն , շարերը կը սարսափին իրմէ : Իրաւարար մը կը նկատուի

ամենէն : Այն հայ կամ յոյն մայրերը որոնց որդիները կամ աղջիկները այսինչ կամ այնինչ Ենիչէրիին անպարկեշտ թախանձանքներուն են թակայ էին, իր պաշտպանութեանը կը դիմէին, եւ Ենիչէրիին օրին մէկը կ'անհետանար : Ուրիշ կիներ իրենց աղքատութիւնը կը յայտնէին նաւաճարին, որ ինք ալ մերթ կը նեղուէր չքաւորութենէ : ձեռքը գաւաթ մը կ'առնէր, Հայոց եկեղեցիին դուռը կը կենար եւ նուէր կը հաւաքէր, պարզապէս սա բառերը կրկնելով . Տաղու տեղ ե : Եւ պղինձ ու արծաթ դրամներ կարկուտի պէս կը թափէին գաւաթին մէջ, 'զոր Տանկուտին իսկոյն կը պարպէր այն զրթւախտ մօր ձեռքը որ կ'ամբոջնար մուրալ իր գաւազներուն համար : Երբեմն կը պատահէր որ աղքատ աղջկան մ'օժիտը հանգանակէր այս կերպով : Նպաստ կը հաւաքէր թշուառութեան մէջ մեռած քրիստոնէի մը թաղման ծախքն ալ հողալու համար, եւ իր ընկերները կը հրաւիրէր որ իրեն հետ ներկայ գտնուէին յուղարկաւորութեան հանդէսին, իւր վերջին միտքարանք ամենէն լքուած աղքատի մը :

Քաղաքի մը տալու համար այն երկիւղին վրայ 'զոր Տանկուտին Ենիչէրիներուն աղբից վերջապէս, քեզ պիտի պատմեմ դէպք մը որ իր մահէն քիչ առաջ տեղի ունեցաւ :

Այն ստեղծները գողութեան գէպքեր շատցած ըլլալով մեր գիւղին մէջ, կառավարութիւնը բնակիչներուն հրամայեց որ գիշերը տունէն դուրս չ'եջնեն առանց վառած լապտեր ունենալու : Ենիչէրի գիշերապահներ մինչեւ լոյս կը չըջէին փողոցներուն մէջ, հրահանգ առած ըլլալով որ կանոնադանցները ձերբակալին ու բանտ տանին : Եթէ պատահէին դիմադրութեան, արտօնութիւն ունէին սպանելու :

Օր մը, Տանկուտի կինը իրմէ խնդրած ըլլալով որ մոմ մը գնէ տանը համար, բարի նաւաճարը, օրական աշխատանքէն յետոյ, յոյն նպարավաճառին խանութը կ'երթայ : Ինք ալ, ինձ պէս, կը սիրէր Սագրզի Վասիլիան : Կը անկէ մի քանի գաւաթ, եւ միւս յաճախորդներուն հետ խօսակցելով ժամանակ կ'անցունէ : Մութը կոխած էր երբ կ'որոշէ տուն երթալ : Չ'ունէր լապտեր : Մենաւոր փողոցի մը ծայրը հասնելուն, կը լսէ գիշերապահ խուճի մը ծանր քայլերուն աղմուկը որ դէպ իր կողմը կ'առա-

ջանար : Իր աչքերը վեց Ենիչէրի կը նշմարեն խաւարին մէջ : Անոնք դող կը կարծին 'զայն, եւ կը հրամայեն որ կանգ առնու : Տանկուտի կը մերժէ հնազանդիլ : Ենիչէրիները պատեանէն կը հանեն իրենց շիւշիւրները եւ իր վրայ կը քալեն : Չ'ունէր զէնք . այլ միթէ կտրիճը զէնքի պէտք կ'ունենա՞ր երբէք : Ետ կ'երթայ մի քանի քայլ, գօտիէն դուրս կը քաշէ նպարավաճառէն առած մոմը, դիտուն վերեւ կը ճօճէ 'զայն իբր զէնք եւ կը պոռայ անհոգնագոչ ճայնով . « Տանկուտի'ն եմ ես : Ահա՛ այն դաշոյնը 'զոր քառսուն Ենիչէրիի սիրտը մխած եմ : Մօտեցէ՛ք, եթէ անհամբեր էք Մուհամմէտի դրախտը երթալու : » Վեց Ենիչէրիները, մոմին տեսքէն սարսափած, որ մութին մէջ դաշոյնի մը շեղբին հետ կը շփոթուէր, եւ մանաւանդ լսելով Տանկուտիի զարհուրելի անունը, կծիկը կը դնեն լեզուպատառ :

— Ի՞նչպէս մեռաւ այդ քաջը, հարցուցի, պատմութեան վերջն իմանալու անհամբեր :

— Այնքան անհաւատալի կերպով որ չ'ես կարող գուշակել երբէք, գաւազս : Ինք որ Ենիչէրիներուն պատուհասն էր, կեանքը վրայ տուաւ Ենիչէրի մը մահէ ազատել փորձելուն համար : Իեռ քառսուն տարու չը կար :

— Ենիչէրի՞ մ'ազատելու համար :

— Այո : Օր մը, Սարայ-Պուրնուի կողմը պատած ատեն, կը տեսնէ ծեր Ենիչէրի մը որ, ջուրին եզրը ոտքերը լուացած պահուն, հաւասարակշռութիւնը կը կորսնցունէ եւ կ'իյնայ հոսանքին մէջ : Մերունին կը տապալարկէր, օգնութիւն ազաղակելով : Տանկուտի չը վարանիր : Քաջ լուղորդ, հագուստներովը կը նետուի ալիքներուն մէջ եւ իսկոյն կը հասնի Ենիչէրիին քով : Սա իր թեւերուն կը փաթթուի այնպիսի ուժով մը 'զոր անձնապահութեան բնազդը անդիմադրելի դարձուցած էր : Տանկուտի չը յաջողիւրձերծիլ, եւ հոսանքը երկուքն ալ կը քշէ կը տանի մէկ հատորի պէս : Այսպէս մեռաւ Տանկուտի, զոր իր բարութեան ու արութեան»

Խաչիկ Աղան գաւաթին մէջ պարպեց օղիի սրուակը : Այս անգամ ջուր չը խառնեց, եւ մէկ ումպով կուլ տուաւ, առանց ձիթապտուղին դաշելու : Աչքերուն մէջ արցունքի երկու խոշոր կաթիլներ կը փայլէին :

Վ Ա Ղ Ը

Վաղը սարսառնութեանց մեջ մշուշուած կա-
խարդն է,
Քեզի հաւնար, եւ ինծի, եւ ամենուն հաւնար,
Որ կը մագնիսէ իրեն :
Ինչո՞ւ կը փերշոտես այդ ծաղիկը, յիւս'ր ի ծնե,
Քանի որ չես գիտեր թէ քեզի անպատճառ
Վաղը պիտի ծաղկի նորեւ :

Կեցի'ր որ ականջեղ ըստ խօսքերը հիւանդ
հոգիին՝
Զոր դեռ մարդու չըսի, եւ գոր ցած
Զայնով միայն կրնամ ըսել ես :
Վաղուան վրայ սարակոյսի ամպը պիտի իջնայ
ինքնին,
Եւ դուն, վիսեչեկն, ու ձանձրացա՛ծ,
Իրիկուն եղեր է՝ պիտի գոչես :

Այսօրը միևնջեւ ե՞րբ պիտի գոհես, եւ ինչո՞ւ,
վաղուան,
Որ գեշ անակնկալն է, եւ դասարկին
Մեջ նայող նայուածք մը սուս :
Երջանկութեան պատկերներ խօջ միտքիդ կ'երե-
ւան,
Միևնջ գերեզմաններ կը փորեն անդի՛ն,
Վաղուան հաւնար, շո՛ւս, շո՛ւս :

Մնաս բարով ըսէ՛ սիրականիդ, գոր յոկ
ցանկացիր .
Ըսէ՛ գոնե թէ չի սիրեցիր ան :
Քու սերդ աչ սուս եր :
Վաղը պիտի դադրին երգերն ու պարերը հեշ-
տայիւր,
Վաղն ա՛յ բանի մը պիտի չհաւսան,
Եւ պիտի թերթատուին վարդեր :

Արցունքներու գետին վրայ պիտի նաւարկի
Հոգիդ՝ գոր չի ձանկցար, ո՛չ մէկ վայրկեան,
Եւ հուսկ պիտի երգէ կարապ :
Զըջայ որ հաւսաս, եթէ ըսեն քեզի վաղը թէ
Պիտի ապրի, հոգիդ, միևնջեւ յաւիտեան .
Վաղը արդէն ուշ է, եւ պարա՛պ . . . :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՉԵԱՆ

ՄԱՇՏՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

Գտիչ այբուբենի, թարգմանիչ,
աւեսարանող եւ մատենագիր

(Շար.)

Իր մեծանուն նախորդին՝ Ներսէսի պէս Մաշ-
տոց արքունիքի մէջ զինուորական կեանքով
կ'ընէ իր մուտքը, իբր 384ին, ուստի կոտորով
Թագաւորի օրով, Հայաստանի երկուքի բաժ-
նուելու ատենները Յունաց եւ Պարսկաց ծառա-
յութեան տակ: Խորենացիի համեմատ՝ « յետ ելիցն
Ներսէսի յաշխարհէ » զոր պէտք է իմանալ իբր
10 տարի յետոյ, զի ժամանակագրօրէն սխալ
կ'ըլլար եթէ Ներսէսի մահէն (իբր 373) անմի-
ջապէս յետոյ իմացուէր: Սակայն Ներսէս՝ իր
տոհմին բացասիկ դիրքին շնորհիւ մէկանց թա-
գաւորին սիրելի սենեկապետը եւ հաւատարիմը
եղած էր, մինչ Մաշտոցի յատկապէս պաշտօն
կը տրուէր արքունական դիւանի մէջ գտնուող
լեզուագէտ դպիրներու մէջ համեստ դպրութիւն,
պաշտօն մը որ իր կարեւորութիւնն ստացած էր
հայ տառերու չգոյութիւնէն, որով հարկ եղած
էր Հայոց Թագաւորին վճիռները, հրավարտակ-
ները եւ ուրիշ պաշտօնական գրութիւնները
գրի առնել ասորի եւ յոյն լեզուներով եւ գըր-
չութեամբ :

Արքունի դպիրի այս կեանքը վարելով հան-
դերձ, Մաշտոց աշխարհային կեանքի եւ կարգ
ու կանոններու կը տեղեկանար ու հմուտ կ'ըլ-
լար, եւ նոյն ատեն՝ իր ամէն ձեռնարկներուն
մէջ խորամուխ ըլլալու եռանդով կը փայլէր
նաեւ զինուորական արուեստովը որուն մէջ նա-
խանձելի կ'ըլլար իր զօրականներուն:

Բայց զինուորական ասպարէզին կողմը չէր
ընթանար Մաշտոցի հակումը: Նոյն իսկ ար-
քունիքի պաշտօնեայ եղած պահուն իր ձեռքն
էին կրօնական գրքեր, եւ ատոնց սրտեռանդն
ընթերցումը ու անդադար խոկումը որ իր սի-
րելական պարապումն էր, վերջ ի վերջոյ ար-
թընցուցին զինքը եւ լուսաւորեցին իր ճակա-

տագրական կոչումին դիտակցութիւնը, որմէ ետքը թէպէտ կը շարունակէր սպասաւորել արքունիքի մէջ իրեն տրուած հրամաններուն, սակայն միւսքը մղոններով հեռու էր այլաարհային կեանքէ, և սիրտն արդէն անջատուած արքունիքէ ու իշխաններէ, և սուրբովին գրաւուած Յիսուսի և իր «ամենահեշտ լուծ»ին սիրով: Կատարելապէս տոգորուած աւետարանական ոգով, և զգալով իր մէջ նոր կեանքի կոչը սաստկազին և ստիպող, կը թողու երկրաւոր հրամանատուի ծառայութիւնը, և կը մտնէ Յիսուսի խաչին հեշտօրէն հետևողներու միայնակեացներու խմբին մէջ: Հոն հոգեւոր կրթութեան, խտակեցիկ ճգնութեան մէջ կը գտնէ գերագոյն ներդաշնակումը իր ներքին մարդուն հետ: Զօրացած այսպէս և նշանաւոր հանդիսացած իբր մեծ ճգնազգեսաց մը որ այն ատենուան համար մեծագոյն փառքն էր կրօնականի մը, կը յարեցնէ իրեն աշակերտներ: Բայց իր հոգեկան ուժը ու սէրը աւելի մեծ դաշտ մը կը փնտռէին. աւետարանելու եռանդն է որ կը մղէ զինքը կենաց խօսքը սերմանելու Հայաստանի այլեւայլ կողմերը, հոն մանաւանդ ուր աւետարանի անգիտութիւնը, կրօնի ուսուցչի ու քրիստոնէական կեանքի պակասութիւնը ամենէն սաստիկ կը զգացնէին հոգեւոր մշակի պէտքը:

Ասոնց մէջ Մաշտոց իր առաքելութեան առաջին վայրը կ'ընտրէ Գողթն գաւառի «անկարգ և անդարման» տեղերը, ուր, կ'երեւի, նախահայրերէ մնացած հեթանոսական սովորութիւններ «սատանայական դիւսպաշտ սպասուորութիւն» տակաւին կը տիրապետէին: Գորու վերջերը Հայաստանի որ և է մասին համար այս տեսակ նկարագրութիւն մը, միսիոնարի մը՝ գործը բարձրացնելու համար՝ իր այցելած երկրին սովորական չափազանցեալ եպերանքը պիտի կարծէինք, եթէ Գողթն գաւառի այս նկարագրութիւնը զոր կը կրկնէ Կորին անոր սահմանակից Սիւնիք և Մարք (Ատրպատական) գաւառներուն համար՝ չհաստատուէր Բիւզանդի խիստ դիտողութիւններէն Հայաստանի մէջ՝ տառերու գիւտէն առաջ անուանապէս տիրող քրիստոնէութեան նկատմամբ «միտք իւրեանց ընդ անպիտանս՝ ընդ անօգուտս եւեթ զբօսեալ (distracts) էին, զոր օրինակ մանկունք

տղայք ընդ մանգութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանդարեալք, և զպիտոյիցն և զկարեւորացն ոչինչ փոյթ արարեալ, սոյնպէս և զեզերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնօտի մտացն՝ ՚ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս՝ խուժաղուժ միտս ունելով, և զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք՝ ՚ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք և ՚ի նոյն հանապազորդեալք»: Նոյն պատմագիրն ուրիշ տեղ մը աւելի յառաջ կ'երթայ և մեծն Ներսէսի մահէն ետքը՝ Հայաստանի մէջ նախաքրիստոնէական հեթանոսութեան վերարծարծում մը կը յիշատակէ «յետ նորա ելիցն յայլարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ՚ի հնութիւն դիւսպաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին . . . բազում պատկերս կանգնեալ երկիրպագանէին»: Զափազանցութիւն արդարեւ, բայց որուն մէջ անկարելի է չնշմարել սա ճշմարտութիւնը թէ մինչև տառերու գիւտը քրիստոնէութիւնը հայ ժողովրդին մէջ խիստ թեթեւ արմատ ձգած էր: Թէ մասնաւորապէս Գողթն, Սիւնիք և Մարք (Ատրպատականի) գաւառները ամենէն աւելի կապուած մնացած էին իրենց հին հեթանոսութեան նախնատիպ բարքերուն մէջ՝ կրնայ բացատրուել անով որ այս գաւառները բուն հայկական չէին, և իբր Արտաշէսի (139 Ն. Ք.) յետին երկրակալութիւնները՝ ամենէն ուշ միացուած էին Հայաստանի հետ, որով անոնց օտար բնակչութիւնը կատարելապէս ձուլուած չէր բուն Հայոց հետ, և նոյն իսկ Պարթև—Արշակունի թագաւորներու երկար շարքէ մը յետոյ՝ դեռ կրնար Կորին դիտել տալ Մարք գաւառի «խուժաղուժ» կողմերուն համար թէ «ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղութեան, այլ և վասն խեցրեկագոյն և խոշորագոյն լեզուին դժուարամտոյցք էին»: Դիտելի է նաև թէ մեծն Տիգրանի Հոովմայեցեոց հպատակելէն յետոյ, Հայք հարկադրուեցան Ատրպատականի Մարաց ետ դարձնել Սիւնիքի գաւառը (անուն մը որ Սիւնիք գաւառի անունները կը յիշեցնէ) զոր անոնցմէ քիչ առաջ կորզած էին Հայք:

Գողթն գաւառի մէջ աւետարանական մը

չակութեան գործնական փորձառութեան մէջ էր որ Մաշտոց զգաց թարգմանաբար ուսուցանելու բոլոր դժուարութիւնները, մանաւանդ երբ Հայաստանի պէս ընդարձակ աշխարհի մը ամէն կողմերը Ս. Գրքի գիտութիւնը տարածելու հոգն էր իր միտքը զբաղեցնող :

Տրամութեամբ կը պաշարուէր եւ մտայոյզ կը տառապէր խորհելով թէ ինչպէս կարելի էր զլուխ հանել համաշխարհական քարոզութիւնն որով ճշմարիտ քրիստոնէական կեանքը փրկութիւնը բերեր էր հայրենիքին: Եւ ահա այս հոգածութենէն, հոգեւոր սիրոյ այս եռանդէն է որ կը ծնի Հայ ազգին գիր գիտնելու « աշխարհահոգ խորհուրդ »ը, այսինքն իր երկիրը հոգացող խորհուրդը, ոչ թէ առհասարակ ամբողջ երկրին հոգ եղած խորհուրդը, ինչպէս սխալ կը մեկնէ Գարագաշեան, հետեւեցնելով թէ « հոգն եղաւ հասարակաց մանաւանդ կղերական դասուն », չըջելով այսպէս՝ հակառակ բոլոր գիւտերու պատմութեան՝ դերերը գերբնտիր անհատին որ կը հետապնդի ու կը հնարէ, եւ հասարակութեան որ աղօտ կը նշմարէ ու կը բաղձայ լոկ : Փարպեցի կրկին եւ կրկին կը յայտարարէ թէ Մաշտոցինն էր « բազմաժամանակեայ մտածութիւնն » « շնորհ հոգողութեանն », եւ թէ Մաշտոցն էր « զոր զարթոյց աստուածայինն շնորհ 'ի ցանկութիւնս յայս »:

Եւ երկար ատեն այս մտածութեան եւ հոգերուն մէջ դեգերելէ ետքն է որ Մաշտոց կը գիտէ յայտնելու զանոնք Սահակ կաթուղիկոսին, եւ կ'ընդունի անկէ հաւանութիւն, քաջալերութիւն յարատեւելու, եւ խոստում օգնելու երբ պէտք ըլլայ : « Եւ ուր տկարանայք 'ի կարգել (ծանօթ այրուբէնքի մը — յունականին — դէմ առ դէմ կարգաւ շարել) զհեգեհայսն, բերեալ առ իս ուզղեմ զայն, քանզի յոյժ դիւրին է գիւտ իրացդ զոր հայցես » :

Ուրեմն առանց երկբայութեան, Մաշտոցինն է մտածման յղացումը եւ գործին նախաձեռնութիւնը, եւ Սահակ կը միաբանի ու կ'աջակցի անոր, եւ կ'առաջարկէ խնդիրը իմացնել Վռամշապուհ թագաւորին : Գարագաշեան մէջ կը բերէ « Եպիսկոպոսներ » եւ « ժողով Եպիսկոպոսաց » որ բնաւ գործ չեն ունեցած այս խնդրոյն մէջ : « Սահակ եւ Մեսրոպ հանդերձ եպիսկոպոսոք յայտնեցին (Վռամշապուհի) զփա-

փագն վասն գիւտի հայերէն դպրութեան » : Եթէ Կորիւնի « ժողովել » եւ « խորհուրդ » բաներէն է որ կը հանէ այդ հետեւութիւնները, անշուշտ անմտադրութիւն մըն է, զի « աշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն » ըսելով եւ քիչ վերջը աւելցնելով « հանդերձ միաբան սրբովն Սահակաւ եւ Մաշթոցիւ » եւ « ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն » Կորիւն կ'ախնարկէ լոկ եւ միայն երկու վախճանեալ եկեղեցականները՝ Մաշտոց եւ Սահակ :

(Շարունակելի)

Գ. ՓԱՌՆԱԿ



ՊՍՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Ֆրեսերիք ՄԱՔԼԷՐ

Երբայ երկու անգամ դուստր քազաւորին մօտ առ Ֆարմանին գաղտնաբար, եւ Ֆարման մանկանն սպանեալեւ ե զՓօլասն ի Հրնդին. եւ հրաւանն սայ Փայփառ մանկանն ի մեջ գիշերին ձգել զնս ի հեռու տեղի :

Երթայ նա գաղտաբար մութըն գիշերով, եւ գայ մօտ առ Ֆարման մանուկն սիրով. Դրրկէ նա զՓայփառ մանուկըն փութով, Տե՛ս որ մարդ չի տեսնու զդա առ իս գալով :

Նայ Փօլասն ի Հրնդին զկերպըն փոխել էր, եւ ի այն գիշերին աշու նըտեալ էր, Կամէր Ֆարման մանկան որ չար գործել էր, Նախանձ կայր (fol.60vo) ի սրբոսին որ զինքն յաղթել էր :

Ետես զաղջիկն եկեալ ըշտապով անցնել Զի կարաց ճանաչել՝ զկերպըն փոխել էր, Ետես ի հետ ելել ըզնա տեսել էր,

Որ ի Ֆարմանն ի մօտ նա գընացել էր :

Ճօջան եւ պաղ երկաթ զրրեհ հագել էր ,
Եւ զթուրն համայիլ միջօքն ածել էր ,
Եւ զկուրզըն Փօլատն ի ձեռն առել էր ,
Եկեալ ի դուռն ի մօտ աչու նստել էր :

Մընայր ի դուրս գալու զմանուկն Ֆարման ,
Որ զնա ինք հարկանէ սրբաովըն մահուան ,
Չի դիտէ թէ ով փորէ այլ մարդու գարան ,
Նա ինքն անկցի ի նա ընկերին փոխան :

Մանուկըն Փայրիփառ ի դուրս ելանէ ,
Երթայ ըզճանփընին զամենն դիտէ(1) .
Դառնայ ի դուռն ի մօտ ըզնա տեսանէ ,
Հագած է պաղ երկաթ , թուրըն քամած է :

Չասաց թէ զքեզ տեսայ եւ ոչ զինք հարցաւ ,
Եբաց թէզ ըզգըռնակն եւ ի տուն մըտաւ .
Վախեց ի իւր մըտին եւ զարհուրեցաւ ,
Բայց ոչ կարաց ասել ըզխօսըն ուրացաւ :

(fol.61)Ասէ Ֆարմանն ի նա՝ ըսկի մարդ ռեսա՞ր .
Կըտրի՞ծն ի յերկիւղէն բացխուռն չկարաց տալ .
Ասաց՝ Ասա՛ խօսէ՛ , մանուկ Փայրիփառ ,
Թէ զո՞վ տեսար որ այդպէս զարհուրեցար :

Ասէ՝ Մէկ մի տեսի անեղակերպ էր ,
Մըլեհ եւ բուռ զրրեհ երկաթ հագել էր ,
Կանգնել ի դուռն ի մօտ գաղտուկ թաղել էր ,
Վախեմ թէ ինչ մըտաւ նա իրք ածել էր :

Դարձաւ նա ի աղջիկն եւ պատասխան տար ,
Կամին դու մեր կենացըս բերել խաւար ,
Ահա մեր արեւուս հասանէ վըճար ,
Տեսին զքեզ եւ եկին հետ մեզ գաղտաբար :

Թէ դու ի մեր կենացս ըզմեզ հանել տաս ,
Չաւտամ թէ դու աշխարհս կենդանի մընաս .
Շըրջիս ի լեռնն ի դաշտ մոլոր ի շուրջ գաս ,
Փնտռես եւ չի գըտնուս անուամեկ դառնաս :

Ասէ՝ Հաւսար մանկանցըն սըլեհեցէք ,
Ինքն այլ հագաւ զրրեհ՝ ւ սսաց՝ Մի՛ վախէք .

(1) Ձեռ. մէջ՝ գիտէ .

Ելնեմ ես ի յերգիքն , լուկ(1) դուք դուռն եկէք,
Մինչ տամ ես ձեզ զհրաման ապա դուք եկէք :

Ելնէ երգիքն ի վեր(fol.61v0)եւ այլ ճանփով գայ ,
Իջնու մէջ փողոցին մանկանցըն ձայն տայ .
Հանց որ նա չի գիտաց թէ Ֆարմանն է նայ ,
Մանուկն Փայրիփառ վազէ առ ինքն գայ :

Ասէ՝ Մըտէք ի տուն որ զիս չճանաչէ նայ ,
Կամ ի տանէ ելած նա հանց գիտենայ .
Յառաջ գամ անկասկած(2) հարցանեմ ըզնայ ,
Տեսնում թէ ինքն ո՞վ է որ զմեզ կու որսայ :

Յառաջ գայ պէգուաման մանուկն եւ կանգնի ,
Ասէ՝ Ո՞վ ես դու , տո՛ւր ինձ պատասխանի .
Գիտաց թէ իր զօրացն էր նա իրաւի ,
Ասաց՝ Գընա՛ , ես եմ Փօլատն ի Հընդի :

Մանուկն երբ զայն լըսեց ինքն առաջ երթայ ,
Բըռնեց շուտ ընկերացն հաւսար նա ձայն տայ ,
Երթան հաւսար ընկերքն ի վերայ նորա ,
Յաղթէ զնա եւ կապել նոցա հրաման տայ :

Ասէ՝ Ասէ՛ք բերէք զգա հետ ինձիկ տուն ,
Որ զինչ որ հարցանեմ տայ ինձի բացխուռն .
Թէ վասն ի՞նչ նենգութեան չէ ելել գա քուն ,
Կամ զո՞ր մանուկ կամէր հանել արեւուն :

Բերին զնա առ մա(fol 62)նուկն ի մօտ ի յարդու ,
Ասէ՝ Կատղա՛ծ գաղան եւ արիւնարբու ,
Գիտեմ շատոց արիւն ունիր վաթեղու ,
Փոխան այլոց արեան քո օրն է մահու :

Դու է՞ր ես անողորմ(3) չես ի մարդ խըղձալ ,
Որ ըզմանկան արիւն տեսնուս քեզ հալալ ,
Չկարես յառաջ ըզքո հարիֆըն ճանչնալ ,
Ապա չար նենգութեամբ հետ նորա խաղալ :

Ահա ըմբռնեցար ի ձեռնն քաջանց ,
Այլոց զինչ կամեցար քեզ է պատրաստած .
Հոս կաս զինչ ըզգերի առջեւս ես կանգնած .
Մատնեմ ըզքեզ ի մահ ի սուր սուսերաց :

Դաչէ զթուրն եւ ի լերդըն խոցեցընէ .

(1) Ձեռ. մէջ՝ լաւ . (2) Ձեռ. մէջ՝ անկրկած :
(1) Ձեռագ. մէջ՝ անողմ :

Նա ինքն իբրև զառիւծ բարձրաձայն գոչէ .
Յառաջ գայ Փայտիփառ զգլուխըն կըտըէ ,
Եւ զերթ ըզչուն կատողած ըզնա սատակէ :

Ասէ աղջկանն՝ Արբ՛, զքեզ ի տուն տանիմ .
Մանկանցըն հրաման տայ որ ի հետ երթին .
Երթան ըշտապով շուտ ի յետ դառնային .
Խորհին թէ զինչ առնեն զայն որ ըսպանին :

Հրաման տայ չորս (fol.62vo) մանկան ի քաղքէն
երթալ ,

Բայց Փայտիփառ մանուկն մօտ առ ինքն կալ .
Իւրեանց տայ շատ սկի խազինայ եւ մալ ,
Փոխէ զկերպն որ քաղքէն մարդ զնոքա չի
ճանչնար :

Գիշերն պարիսպն ի վայր զնոքա իջուսցէ ,
Ի յայլ քաղաք երթալ նոցա հրամայէ ,
Բայց ոչ խիստ հեռանալ զատիլ ինքենէ
Մինչև խապար եւ թուղթ(1) նոցա ուղարկէ :

Առնու ըզՓայտիփառ մանուկն ի տուն գայ .
Ասէ՛ Վերո՛ւ ճարտար եւ աա՛ր ճրգէ՛ զդայ
Հեռու տեղ անգուման ի ճանփուն վերայ(2) ,
Եւ թեզ դարձիր առ իս որ մարդ չիմանայ :
(Շարունակելի)



ԳԻԾ ՄԸ

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՄՏԱՒՈՐ ՈՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Չաւակ Հայաստանի քիչ ծանօթ մէկ ան-
կեան, շահեկան կը համարիմ ուրուագծել Հայ
Գիւղացու ընտանեկան — հասարակական
ժողովները: Խոստովանիմ կանխաւ որ մեր հայ-
րենեաց շատ մը կողմերը ճանչնալու առաւել-
ութիւնը չունին, ծանօթութիւններս կը սահմա-
նափակուին Ապահունեաց եւ Մոկաց գաւառ-
ներու մէջ միայն, եւ, եթէ թոյլ կու տամ ինձ
ընդհանուր առմամբ խօսիլ, անձնական այն հաս-
տատ համոզումովն է որ միւս գաւառներու մէջ

(1) Ձեռ. մէջ՝ բուխք . (2) Ձեռագր. մէջ՝ վերայ :

Հայ գիւղացու ընկերական յարաբերութիւններն
ասոնցինէն շատ չեն տարբերիր :

Յայտնի է թէ հասարակութեան մը քաղա-
քակրթական յառաջադիմութեան մէջ ընտանե-
կան — հասարակական ժողովները մեծ դեր ու-
նին, կարելի է անգամ ըսել՝ իսկական հիմքն
ու աստիճանաչափը կը կազմեն անոնց : Քաղա-
քացիներու մօտ այս դերը ճանչցուած ու գնա-
հատուած է այն աստիճան՝ որ հոն այդ ժողով-
ները զիտակցաբար նպատակաւոր կերպով կը
կազմակերպուին, անոնց արդիւնքը կը հետա-
տեսուի ու մասնաւոր ճիղ կը թափուի կենդա-
նութիւն, շուք ու փայլ տալու համար անոնց :
Գիւղացիներու մօտ այս դերը դեռ բացորոշ չէ .
հոն՝ կեանքի ուրիշ երեւոյթներու նման, ընկե-
րական հաւաքումները նախնական, գրեթէ բը-
նազդական վիճակի մէջ կը մնան տակաւին,
հետեւաբար խուլ, անշուք ու անգոյն . որոշ
կազմակերպութեան հանգամանք չունին, պարզ
ժամանցներ են աւելի : Անուբանալի է սակայն
որ հոս ալ այս ժողովներն իրենց խորին պար-
զութեան մէջ ունին եւ յարաբերական աստի-
ճանով կը խաղան բարեբար դեր մը ժողովուրդի
մտաւոր եւ բարոյական զարգացմանը — քա-
ղաքակրթութեան — մէջ, եւ, ասոր համար ալ
մեծապէս արժանի են նկատողութեան առնուե-
լու: Գիւղացին, առհասարակ, իրեն արուած ռա-
միկ, կոշոճ, կոպիտ մակերիւնքով՝ քաղաքա-
կրթութեան հետ անձուլելի եւ խորթ կը ճանչ-
ցուի յաճախ : Ճուցնելու համար այս տեսու-
թեան հարեւանցի եւ անարդար ըլլալը, պատշաճ
կը համարիմ, առաջադրած նիւթիս սկսելէ ա-
ռաջ, վերջիչել քաղաքակրթութեան բուն սահ-
մանը : Ինչպէս դիտենք, քաղաքակրթութիւն
կը նշանակէ « հասարակութիւն կազմող մարդու
մտաւոր եւ բարոյական կարողութեանց զարգա-
ցումը »: Արդ, քաղաքակրթութեան այս սահմա-
նէն իսկ կը հետեւի որ ընտանեկան, հասարա-
կական կեանքը, պարզ արգասիք մ'է մարդուս
հոգեկան կարողութեանց : Բայց ամեն արդա-
սիք, փոխադարձաբար, ճշգրիտ չափը կը ներ-
կայացընէ զինք արտադրող ոյժին կամ ոյժերուն .
ուրեմն ուր որ ընտանեկան, հասարակական
կեանք կը տեղադրուի ո եւ է չափով, հոն կայ նա-
եւ աներկբայօրէն մտաւոր եւ բարոյական զար-
գացում մը, գէթ սաղմնային վիճակի մէջ: Այս
եզրակացութեամբ անժխտելի է որ հիմնական
խարխիւր քաղաքակրթութեան պատկառելի
չէնքին՝ դրուած ու սրբազործուած է գեղջկա-
կան կայուն, ընտանեկան եւ հասարակական
կեանքին մէջ: Եւ քաղաքակրթութիւնն իր կա-
տարելիութեան աւելի կը մերձենայ այն ժողո-
վուրդին մէջ, որու ընկերական կեանքը համա-
մարդկային բարձր եւ աղնիւ զգացումներով է՛ն
շատը տոգորուած է: Արդ կարելի է հաճոյքով
հաստատել որ Հայ գիւղացին՝ հակառակ իր մը-
տաւոր զարգացման շատ անձուկ վիճակին, կը
մնուցանէ եւ կը պատկերացնէ իր մէջ քաղա-
քակրթութեան ամենաառողջ քնածիլն տարբեր,
սկզբունքներ :

Հայ գիւղացու հիւրասիրութիւնը յայտնի է թէ առածի կարգ կրնայ անցնիլ: Եւ իրաւ թըշուառ, նախախնամութեան ցասման ու լքման ենթարկուած կը համարի զինք Հայ գիւղացին այն օրն երբ իր օճախէն, իր վաստակէն բաժին մ'ելած չէ կարօտի մը, հիւրի մը, առանց կրօնի եւ ազգութեան յայտնի խտրութեան: Արդ՝ ո՛ր առմամբ ալ որ քննելու ըլլանք այս զգացումը, հողույ այս արտադրութիւնը, առաքինութեանց վսեմագոյնը պիտի գտնենք զայն, քանի որ համամարդկային սիրոյ, կարեկցութեան եւ անշահախնդիր զոհաբերութեան մը գործնական ապացոյցը կը հանդիսանայ մեզի: Իսկ ընկերական, հաւաքական կեանքին, ընկերաբար վայելուած մտաւոր հաճոյքներուն, Հայ գիւղացին միշտ ընդունակ, սիրող եւ պաշտող մ'եղած է, եւ ունի իր այս զգացման սա սիրուն արտայայտութիւնը՝ « Մահն անգամ ընկերով հարսանիք է »: Ուշագրաւ են՝ արդէն Հայ գիւղացու մտաւոր ու հոգեկան ընածին ձերբերը: Ահա թէ ինչպէս կը գնահատէ Հայ գիւղացու գեղեցիկ յատկութիւնները եւրոպական քաղաքակրթութեան ծանօթ մեր անմահ իրպասան Արտվեստը. « Միտք էի անու՛մ՝ որ թէ կտրիչ մարդ ասես, մեր միջումը հազարաւորն են էլիլ ու էս օր էլ կան. թէ խելօք խօսք ասես, մեր պառաւններն էլ հազարը գիտեն: Թէ աղ ու հաց ասես, սէր, բարեկամութիւն, քաջութիւն, երեւելի անձինք՝ ասես, մեր գեղըցուց սիրան էլ ա լիքը էսպէս մտքերով: Առակ, մասալա, սուր սուր խօսքեր՝ որ ուզենաս, հօ՛ էն յետին ուսմիկ մարդը՝ մէկի տեղակ հազարը կ'ասի: . . . Լաւ գիտէի, որ թէ՛ Օսմանցիք, թէ՛ Ղլլարչի երկրումը ինչքան էսպէս երեւելի, խելօք, հունարով մարդ են էլիլ, ինչքան իմանի, Շահի, Սուլթանի դռներին սիրեկան աչըղ, լաւ խաղ ասող, ոտանաւոր շինող մարդիկ են էլիլ, շատը Հայ ա էլիլ: Մինակ Քէշիչ օղլին, Քիօն օղլին բաւական են՝ որ ասածս սուտ չի՛ դուրս գայ: Թո՛ղ էս օր էլ մէկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խօսայ, նրա ասած խօ՛սքերն, նրա ճարտար լեզուն, նրա էն հիանալի բօյն ու պատկերը, նրա հէնց մէկ հունարը տեսի, որ հարիւր տեսակ զանազան մարդի ու ազգի լեզուն, շարժումնքը, նստել վեր կենալը էնպէս ցոյց կտայ, որ քօռանում, թէ Եւրոպիոյ էն ընտիր թէ՛ատրոններումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հօ՛ իր օրումը՝ կարելի ա, էն ժամանակն ըլի տեսած՝ որ այբբենը մեր միջումը դարով էին բռնում, գիւլով վեր քցում, էն ժամանակը կ'իմանայ, թէ Հայոց միջումը ի՞նչ հունար կայ »: (Յառաջաբան «Վերջ Հայաստանի») :

Ապահունեաց գաւառի մէջ քիչ շատ կարողութիւն ունեցող գիւղացին ունի իր հիւրանոցը: Մասնաւոր շինութիւններ չեն այս հիւրանոցները, հապա — թող արտաոց եւ ծիծաղելի չթուի — արտաոտան մէկ անկիւնը,

սովորաբար մուտքին մօտ, անջատուած կիտրմով կամ ցանկապատով մը եւ կամ ամբիոնածե բարձրացած քառանկիւն հողաթմբով մը: Առաջին ձեւին տակ օտա, իսկ երկրորդին՝ սախու կը կոչուին անոնք: Գիւղացի հարուստներ կան որ ունին երեք հաս արտաոտան, մէկը գոմէջներու համար, մէկը եգներու, կովերու ու հորթերու, որոնք տեղական բառով կը կոչուին քաւկա, եւ մէկ մ'ալ ձիերու համար, որ կը կոչուի արտո (օչխարներու փարախը Հայ գիւղերու մէջ «գոմ» կ'անուանուի): Օտաները ձիերու արտաոտան մէջ են գետեղուած, հեռաւարար, հարուստներ միայն օտա կ'ունենան: Կան օտաներ՝ այնքան խնամով ու ճաշակով յարդարուած, որ կարծես յատուկ սրահներ ըլլան անհրաժեշտ յարմարութիւններովը: Ախտաոտան դռնէն ներս մանկուցն պէս երկու երեք քայլ անդին, ալ կամ ձախ կողմը, կը գտնուի օտային մուտքը անգուռ: Մուտքին ձիչդ դիմացը, պատին մէջ կը տեսնուի բոսխերիկը (վառարան), ուր ամբողջ ցուրտ ամիսներուն կրակն անպակաս է: Բոսխերիկի երկու կողքերէն մինչեւ մուտքի երկու կողքերը զուգահեռական կերպով ձգուած երկու երկայն եւ սաշուած մարդակներ օտային յատակը կը բաժնեն երեք մասի: Մէջտակը մասը պարզ գետին (հող) է եւ կը ծառայէ իբր ուղի, անցուղարձի համար: Կողմնակի մասը ծածկուած է ձեւուած խտրներով եւ երբեմն խտրներու վրայէն թաղիքներով՝ բազմելու համար: Իսկ սախունքը՝ տանուտէրի կարողութեան համեմատ, ծածկուած կ'ըլլան կամ պարզ կակուղ խտով կամ խտրով, եւ կամ թաղիքով: Ախտներէն զատ «ձիթխաց» ներս ալ սաքու ունին: Ահա այս օտա եւ սաքու կոչուած հիւրանոցներն են որ աշնան վերջին եւ ձմեռուայ ամիսներուն իր ծառայեն Հայ գիւղացուն իբր ժողովարան: Անցողակի ըսեմ որ սաքուներէն շատերը, ցորեկ ատեն, կատարեալ արհեստանոցներու կը փոխուին գեղջկուհիներու համար: Հարսներ եւ օրիորդներ կը հաւաքուին հոն իրենց ձեռարուեստովը զբաղելու, բուճ (զուլպայ) ու սաղ (սրնքապան) հիւսելու, արախչի, սրտանոց եւ մեղար (կանացի գոգնոց), ճրդտան (քսակ) բանելու, խուսճան գործելու ու քարման մանկուց. այս վերջին աշխատութեան համար յաճախ մտուրները կ'ելլին, բարձր տեղ ըլլալու համար:

Իրացիութեան կամ դասակարգի խտրութիւն չկայ ժողովականներու մէջ. ամէն ոք ազատ է իր նախընտրած ժողովարանը յաճախել: Աւելորդ է ըսել թէ, ժողովարաններու վառելիք, ճրագոյս, եւն. ամէն ծախք ու հոգածութիւն տանուտէրի վրայ է, ժողովականներն ասոնց մասին չեն մտածեր անգամ: Ժողովարաններն այսպէս բաց ըլլալով ցանկացողի առաջ, միեւնոյն սաքուի կամ օտայի մէջ իրարու հետ հաւաքուած կը գտնուին զանազան դասակարգի անհատներ: — քահանայ, տիրացու, վարժապետ, աշակերտ (երբեմն հայրեր իրենց տղաք-

ներն ալ հետեւին կը բերին), գիւղապետ, տանուտէր, գզիր, հօտաղ, մշակ եւ մինչև անգամ օտարազգի հիւր: Անիծեալ նախապաշարու մով մը, միայն իգական սեռն է, որ իր յատուկ շնորհալի տեղը դեռ չունի այս հաւաքումներուն մէջ: Պարզ բան է թէ այս տարասեռ խմբակներու խօսակցութեան նիւթն ալ այլազան կ'ըլլայ: Եւ իրաւցնէ հոն կը յեղյեղուին կեանքի բոլոր խնդիրները: Քահանան երբեմն ըստ պատշաճի, օրուայ տօնի նշանակութիւնը կը բացատրէ, երբեմն կրօնական վէճի շուրջը կը դառնայ եւ լուսաւորչական հաւատքի ուղղափառութիւնը գերընտիր կը հռչակէ ամեն կրօնէ ու աղանդէ, գիւղապետը քաղաքական կացութիւնը կը շօշափէ, վարժապետը կրթական վիճակն ու կրթութեան օգուտները կը քըրքրէ, պանդխտութենէ վերադարձողն իր պանդխտավայրի ճարտարարուեստական հրաշալիքները կը ձգնի պատկերացնել, տանուտէրը գիւղանտնտեսական հարցերու շուրջը կը դառնայ, ծերերն իրենց երիտասարդութեան, հին ժամանակներու խաղաղութիւնն ու բարօրութիւնը կ'երանեն, հօտաղն ու մշակն իրենց խնամոց յանձնուած լծկաններու գովքը կ'ընեն, պատրաստաբաններն իրենց սրախօսութիւնները կը սփռեն շորս կողմը, երգիչները իրենց քաղցր ձայնը լսել կուտան, աշուղներն իրենց բանաստեղծական բնատուր տաղանդը մէջտեղ կը հանեն՝ ժամանակակից անցքերու վրայ յօրինած իրենց նոր պատկերներովը, վերջապէս ժողովականներէն իւրաքանչիւրն անխտիր առիթ եւ ասպարէզ կը գտնէ իր շնորհը փահասել տալու հոն: Մտաւորական այսպիսի հաճելի ժամանցավայր ըլլալէ զատ, այս օտաներն ու սաքունները երբեմն ի հարկին իբրեւ պատուոյ եւ հաշտարար ատեան կը հանդիսանան գիւղացիներու ներքին խռովութեանց: Գիւղապետը կամ տանուտէրներէն մին իմանալով որ այսինչեանք այնինչեաններու հետ թեթեւ վէճ մ'ունեցած են, խռոված իրարու հետ, թշնամացած եւ սուր կերպարանքի հասուցած իրենց քէնը, իրարմէ գաղտնի, մասնաւոր կերպով իրիկուն մ'իր օտան կամ սաքուն կը հրաւիրէ անոնց պետերը, եւ փափկանկատ դարձուածքով խօսքը անոնց վրայ կը բերէ, ժողովականներու առաջ, եւ բարոյական ազդու խորհուրդներով, ներկաներու միջամտութեամբ կը հաշտեցնէ իրարու հետ:

Մոկաց գաւառին մէջ ալ Հայ գիւղացու ընտանեկան հաւաքումները պարզութեան նոյն դրոշմը կը կրեն, այս տարբերութեամբն որ հոն նոյն իսկ տանուտէրի բնակարանը կը ծառայէ իբր ժողովարան եւ իգական սեռն այս առիթով, թէեւ անուղղակի կերպով, իր կրթիչ բաժինը կ'ունենայ անոնց մէջ: Ասկէ զատ մտերմութիւնը հոն աւելի բացայայտ է եւ շեշտուած, ժողովականները յաճախ իրենց հետ կը բերեն իրենց օճախի բարեքններէն մէկ մէկ բաժին եւ ցրուելէ առաջ կը սրբագործեն իրենց

մտերմութիւնը հաւաքական պաշտիւով մը (պաշտիւթիք, souper): Հարկ չկայ ըսել թէ բաժինները կը բաշխուին տանտիրնոջ ձեռքովն ու քմահաճոյքովը:

ԴԱԻԻԹ ԿԱՐՍՊԵՏԵԱՆ



ԱՎՈՒՄԲ «ՄԱՍԻՍ»

Խումբ մը Փարիզաբնակ Հայ բնակիչներ եւ անհասներ, վերջեւս հիմնեցին գրական եւ երաժշտական Ակումբ մը, զոր անուանեցին Ակումբ «Մասիս»: Այս ակումբի անդամներ կը գումարուին ամիսն անգամ մը սրահի մը մէջ, եւ երեկոյթ կ'անցընեն ունկնդրելով գրական ընթերցումներու, արտասանութեանց, բանաստեղծութեանց եւ երաժշտական նուագաւորութեանց: Ապրիլ ամսու երեկոյթին, Պ. Չեբազ կարդաց իր «Տանկուսի» շահեկան պատմուածքը, որու մեջ երեւան կը հանէ Եհեզիէրիներու օրջանեկ անակնկալ ու ինքնասիպ Հայ սիպար մը, ցարդ անձանօթ մնացած եւ որ կ'արժէր մոռացումէն դուրս բերուիլ: Նոյն երեկոյթին, Պ. Դաւիթ Կարապետեան կարդաց հետաքրքրական բանաստեղծութիւն մը Հայոց գիւղական «Ակումբ» ներուն վրայ մեզի գաղափար տուող: Այդ երկու գրութիւնները կը հրատարակեն մեր այս բուով: Պ. Չեբազի վիպակին Ֆրանսերէն բնագիրը լոյս տեսած է արդէն La France Littéraire ամսագրին մէջ:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Հանոյնով կ'իմանանք որ Փարիզի Հայ ուսանողները, որ այժմ յիսունի մօտ են բուով, այս օրերս՝ վերահասուցած են «Փարիզի Հայ ուսանողաց միութիւն»ը որ քանի մը քառի է վեր դադրած եւ գոյութիւն ունենալի:

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

- Թիւ 1. — Անարոյ Ֆրանս . Եպիկուրի պարսեզը , (Հատուածներ) , թարգմանեց Ա. Չօպանեան , հեղինակին կենդանագրով . Գին 1 ֆրանք :
- Թիւ 2. — Ալֆրէս զը Վիլնէիի Քերթուածները , հեղինակին կենդանագրով , թարգմանեց Ա. Չօպանեան : Գին 1 ֆրանք :
- Թիւ 3. — Օմար Խայեամի Քառեակները , քննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնագրէն թարգմանեց Գ. Փառնակ . Գին 3 ֆրանք :

ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻՒՆԻՔ « ԱՆԱՀԻՏ »Ի

- Թիւ 1. — Նահապետ Քուչակի Դիւանը , սիրոյ երգեր , խրատական եւ այլարանական երգեր , պանդուխտի երգեր . Քննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Չօպանեան . 3. ֆր .
- Թիւ 2. — Մկրտիչ Պեշկիբաշչեանի Քերթուածներն ու ճառերը , ծանօթագրութիւններով հրատարակեց Ա. Չօպանեան . 4 ֆր . 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳՐԳԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր . 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTERATURE, SON ROLE EN ORIENT, par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր .

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'A LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր . 50

POEMES ARMENIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր .

CHANTS POPULAIRES ARMENIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff. 3 ֆր 50

Ouvrage couronné par l'Académie Française

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ ,
2 տոլար (Ամերիկա), 5 բուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա),
3 բպլ. (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին ,

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բազու

Տիկին Մարի Սունգուկեանց

Ռուսնուգ

Պարոն Գառնիկ Մազմանեան

Գահիրէ

» Միհրան Աբգարեան

Ֆիլիպէ

» Թագուր Հինգլեան

Թեհրան

» Լեւոն Բարայեանց

(Տեսուչ Թեհրանի Հայոց
երկսեռ դպրոցներուն)

Նիւ-Նօրք

» Պետրոս Գաբրիէլեան

Ուօքեկըն

» Տ. Մասճեան

Իսթ Բէմպրիճ

» Գաբրիէլ Մուչէղեան

Իսթ Ուօթըրթաուն

» Կ. Մալխասեան

Սէնթըրլ Ֆօլս

» Նշան Մինասեան

Զիբալիօ

» Ս. Մուրատեան

Նեչուէ

» Յ. Արոզեան

Ուսթըր

» Մինաս Գաբրիէլեան

Ճրէզնօ

» Գ. Նալպանտեան

Դաւրէժ

» Մ. Զարաֆեան

Պաթում

» Մամաջանեան

Նիւ Պրիթէյն

» Ս. Սաչաքլեան

Փրովիտէնս

» Աւագ Կարապետեան

Թիֆլիս (եւ շրջակայք)

» Սեդրակ Կիրակոսեան

(Վանքի պերիուլոկ, տուն Յակոբջան-
եանի, N. 15)